

ԵՐԻՆԵԱԳ գ.

ՔԱՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

- ԿԱՐԱՎԱՐ

371. 3
5-16

Հայության - 1912

2002 - 18

Գ. Ե Պ Լ Ե Ա Ն
ՀԱՅ

ՔՆԱՐԱՏՈՒԹԻՒՆ ՑԻԼԵՐԻ

ԶԵԽԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ



Վ. Ա. Գ. Ա. Բ Շ Ա. Գ Ա. Տ

տրաշորժ Տպարան Մայր Աթոռոյ Ա. Էջմիածնի

1912

371·3

5-16

71.3

5-16

Վթ.

Գ. Ե Պ Ի Լ Ե Ա Ն

ՔՆԱՐԱՏՈՒԹԻՒՆ ՑԻԼԵՐԻ

ԶԵՒԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ

ՀՐԱՄԱՆ ՀԱՅՈՎ ԽՈՎՐԵԱԾ



1911

ԵՐԱ 89 8 11

ԽՈՐԻՆ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՄԲ

ՆՈՒԻՇՈՒՄ ԵՄ ԱՌԴՅԱՆԻԿ ԱՃԽԱՏՈՒԹԻՒՆԸ

Արտապած «Արարատ» ամսագրից

Ուսուցչապես ԷՐՆՍՏ ԴԻԻՐԻՆ



Վ. Ա. Ղ. Ա. Բ Շ Ա Պ Ա Տ

Էլեքտրաշարժ Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

[1] 5 APR 2013

78.092

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ՑԻԼԵՐԻ

ԶԵԽԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ.

Մի բանի խօսք.

Մեր մանկավարժական գրականութեան մէջ մինչեւ
այժմ տիրող են եղել Գերմանիայում ծնած և զօրեղացած
Հերբարտ-Յիլէրեան դպրոցի մտքերը։ Մեր մանկավարժ-
ները համարեա առանց բացառութեան քարոզել և քա-
րոզում են, որ մանկավարժական խնդիրների լաւագոյն
և ճշտագոյն ըմբռնումը Հերբարտի և Յիլէրի կողմից է
եղել և որ մեր դպրոցները պէտք է բարեփոխուեն այդ
մանկավարժների ոգով։ Ընդունելով հանդերձ, որ Ներ-
բարտը, աւելի փոքր չափերով Յիլէրը, մանկավարժական
խնդիրների լուսաբանման և խորացման համար ընդհան-
րապէս աշխատել են, հենց սկզբից չեինք ցանկանալ թագ-
ցնել մեր խոր համոզումը, ոչ այդ անձնաւորութիւնների
ազգեցութիւնը չը պէտք է անմիջական գոյն ունենայ-
ներկայի համար, այլ աւելի պատմական։ Նրանք պէտք է
դառնան պատմական անձնաւորութիւններ այնպէս, ինչ-
պէս Ռուսասօն, Լոկր, Կօմենիուսը և ուրիշները։ Նրանց
մտքերի կորիզը, կամ աւելի ճիշտ այդ կորիզի որոշ մա-
սերը միմիայն պէտք է պլողաբեր դառնան ներկայ ման-
կավարժութեան համար և չը պէտք է այդ կորիզի հետ
այն սխալ ենթադրութիւնը կապել, թէ նա հնարաւորու-
թիւն ունի իր մէջ ներկայ մանկավարժական խնդիրը
ամբողջ ծաւալով պարունակելու։ Նոր մեթոդները, նոր
աշխատանքներն ու հետազոտութիւնները կամաց-կամաց



8969-56

անկախութեան ճանապարհներ են բանում ներկայ մանակավարժութեան առաջ ազատուելու Հերբարտի և Ցելէրի անմիջական և միակողմանի ազդեցութիւնից:

Այս ուղղութեամբ փորձեր Գերմանիայում արդէն սկսուած են զանազան կողմերից և տեսակէտներից: Հերբարտ-Ցիլէրեան գորոշը աստիճանաբար իջնում է իր գերիշխան բարձունքից և ամեն կերպ աշխատում է րեփորմի փորձեր անել՝ դիմանալու նոր ծագող ուղղութիւնների վտանգաւոր մրցմանը:

Մեզ մօտ Հերբարտ-Ցիլէրեան տեսակէտները դեռ շարունակում են առանց հակառակ կարծիքների գոյութեան և լուրջ քննադատականների տիրապետող կամաւելի ճիշտ տիրապետել ցանկացող դրութեան մէջ մնալում այս աշխատութիւնը թող առաջին փորձը լինի քննական վերաբերմունք ցոյց տալու Ցիլէրեանների այնքան մեծ պարծանք կազմող ձեւական հինգ աստիճանների մասին:

Այս գրուածքս համալսարանական աշխատանք է, հրատարակուած գերմաներէն 1909 թուականին: Մի կողմից գերմանական մանկավարժական մասնագիտական մի քանի թերթերում իմ գրքի մասին լոյս տեսած քաջալերական րեցենզիաները, որոնցից մէկի հեղինակի կարծիքով այս աշխատութիւնը այս թեմային վերաբերող լաւագոյն գրուածքների մէկը պէտք է համարել, միւս կողմից այն հետաքրքրութիւնը, որ ցոյց տուին մեր հայ մանկավարժները գերմաներէն լոյս տեսած իմ աշխատութեան վերաբերմամբ (պ. Ս. Մանկինեանը «Հիվիւում և պ. Յ. Տէր-Միրաքեանը «Նոր գորոշի» 1909 թուի վերջին և 1910 թուի առաջին երկու համարներում), ինձ վստահութիւն ներշնչեցին հայերէնի փոխադրելու իմ գերմաներէն աշխատանքը, որոշ տեղեր կրծատումներ, և որոշ տեղեր լրացումներ մտցնելով:



Յիլէրի ձեւական աստիճանները.

Կը թութիւնն ու գասաւանդումը գործունէութեան ձեւը են և ինչպէս ամեն մի գործունէութիւն պէտք է իշխուած լինի մի որոշ նպատակից, այնպէս և կը թութիւնը պէտք է իր առաջ մի շատ պարզ ու որոշ նպատակ ունենայ: Ցիլէրի կարծիքով կը թութեան ամենաբարձր նպատակն է աճող ուրնգի կրօնա-բարոյական բնաւորութեան կազմակերպումը: Կը թական ամենալաւ գործունէութեան ձեւըն են կառավարութիւնը (գեցեպլինա), գասաւարակութիւնը և գասաւանդումն: Կառավարութիւնը և գասաւարակութիւնը շատ քիչ բան անել կարող են, եթէ պակասում է գասաւանդումը: Հասակաւորներս պէտք է գասաւանդենք, սաների մտապատկեները շրջանը կարգաւորենք, խորացնենք և ընդլայնենք, որովհետեւ սանը միմիայն այսպիսի աշխատանքից՝ այսունքն գասաւանդումից յետոյ, կարող է իր համար մի ճիշտ աշխարհաճայեցք կաղմել: Կը թութեան գլխաւոր նպատակը-ճիշտ բարոյականութիւնը և կրօնականութիւնը-երեխայի որուում հիմնաւոր արմատներ գցել կարող են միմիայն վերոյիշեալ ճիշտ աշխարհաճայեցքի կազմակերպուելուց յետոյ:

Դասաւանդման կարեսութիւնը ապացուցելուց յետոյ մի այլ նոյնքան կարեսը հարց է յառաջանում: Ի՞նչ կերպ, ի՞նչ հայացալէտերով պէտք է գասաւանդել, որովհետեւ դասաւանդել կարելի է բաղմակերպ, ինչպէս այդ ցոյց է տալիս մանկավարժութեան պատմութիւնը: Ցիլէրը այս խնդրի վերըերմամբ իր առանձին տեսակէտներն ունի, որոնց համախմբումից կազմուում են նրա առանձին մեթոդի հիմունքները: Ցիլէրի մեթոդը հիմնուած է իր ուսուցիչ Հերբարտի մանկավարժական ուսումնասիրութիւնների վրայ, սակայն Ցիլէրը բազմաթիւ խնդիրներում միմիայն գրգիւներ ստանալով՝ աւելի ինքնուրոյն է մնացել, ուստի և ամեն մի գէպում Ցիլէրին Հերբարտի ամենահաւատարեիմ շարունակողը համարել, ինչպէս ոմանց կողմից ենթադրում է*), անձիշտ կլինէր:

Դպրոցը աշակերտներն պէտք է բաղմաթիւ իմացութիւններ տայ և այն էլ մի որոշ ժամանակաշրջանում: և

*) Հերբարտի հետ մօտ ծանօթանալ ցանկացողը թող կարդայ ձեւմարանի նախկին ուսանող Արէլի «Հերբարտ եւ նրա մանկավարժական սիստեմը» շահնկան աւարտական շարադրութիւնը, որը եւ առանձին գրով լրյս է տեսած:

ողովինետև այդ իմացութիւնների քանակը քիչ չէ, ուստի և անհնար է այդ բոլորը, ծրագրով պահանջածը, միանգամից, անկարգ, անսիստեմ դասաւանդել: Ուրեմն և պէտք է ունենալ մեթոդական մի ընթացք, որը համապատասխանուած մանկան հոգեբանութեանը՝ դասաւանդման և նիւթերի անկարգ յաջորդականութեանը վերջ է տալիս:

Ամեն մի դասաւանդւող առարկայ բազմաթիւ նիւթեր ունի, այդ նիւթերը պէտք է մաս-մաս տալ, որովհետև այդպիսի մատնիկներով իւրացնել տալը աւելի համապատասխան է մանկան հոգեբանութեան ընդունողական և վերաբաժնողական կարողութեան: Դասաւանդւող առարկաներից կազմած այդ առանձնակի ամբողջութիւնները կոչւում են «մեթոդական միութիւններ» և որպանց գլասաւոր յատկանիշը այն է, որ ամեն մէկը՝ մտապատճեներից շրջանի մի ամբողջութիւն է կազմում: Մեթոդական միութիւնները չեն կարելի նախօրօք որոշել, որովհետև նիւթերի ստորաբաժանման ժամանակ ոչ թէ հէնց իրենք նիւթերն են երբեւ ստորաբաժանման հիմունքներ յառաջանում, այլ աշակերտի հոգեկան զարգացման աստիճանը, նրա գիտակցութեան «նեղութիւնը և լայնութիւնը». այսինքն, տարբեր հոգեկանի տէր աշակերտների կարելի է տարբեր մեծութեան և մտապատճեների հարուտութեան մեթոդական միութիւններով զբաղեցնել: Ամեն մի մեթոդական միութիւն պէտք է մշակել ձեւական հինգ անմիջապէս իրար յաջորդող աստիճանների համաձայն: ամեն մի աստիճան հիմնուած է հոգեբանական մի որոշ օրէնքի վրայ:

Ուրեմն ըստ Ցիլլէրի ամբողջ տարուայ ընթացքում դասաւանդւող առարկաների նիւթերը պէտք է ամբողջութիւնների կամ ինչպէս ինքն է ասում, մեթոդական միութիւնների վերածել: ամեն մի մեթոդական միութիւն պէտք է մտքի մի ամբողջութիւն, մի գաղափարի ներկայութիւն ունենայ և այդ ամբողջութիւնները պէտք է հինգ ձեւական աստիճաններով մշակել: Այժմ անցնենք այդ աստիճանների նկարագրին:

Ամեն մի մեթոդական միութիւն, ինչպէս և ամեն մի նոր ժամ պէտք է սկսել նախ նպատակի ժանօթացմամբ: Նպատակը ըստ պէտքէ տայ նորը, այլ պէտք է ուշագրութիւնը ուղղի գէպի նորը, ու պէտք է գրգռի աշակերտի ուշագրութիւնն ու հետաքրքրութիւնը: պէտք է լինի կոնկրետ, ըմբռանելի համապատասխան երեխաների ըմբռնման կարողութեան:

Դասի նպատակի որոշումից յետոյ ըրպէտք է նոր նիւթերը անմիջապէս տալ, որովհետև այդ ձեռվորութեար հասկանալի կը լինի աշակերտներին, այլ նոր նիւթից առաջ առաջական ամբողջապահումի ժամանակ կարելի է այդ բացը լայնել:

արոշումից յետոյ պէտքէ վերցիշել այն հին, ծանօթ նիւթերը, որոնք նմանութիւն ունին նոր քննելիք նիւթին: Հինի և նորի այս կապակցումն ու յարաբերումը անհրաժեշտ մի պայման է նորի հեշտ և լաւ ըմբռնման համար: Այս հանգամանքը հիմնուում է հոգեբանական ապերցեպցիալ օրէնքի վրայ, ըստ որի նոր ըմբռնելին շաղկապւում է եղածի, հին հետ: Ապսոլուտ նորը, որը սովորողի մէջ կապակցութեան և ոչ մի հիմք չի գըտնում, չի կարող իւրացուել: Այդ նպատակի համար աւելի լաւէ, որ հին նիւթերը կտոր կտոր ամբողջութիւններով քննուուն, յետոյ բոլորը միասին կապակցուին, այնպէս որ աշակերտը այդ ձեռվ վերաբաժնելու հնարաւորութիւն ունենայ: Միմիայն այս կերպ կարող կը լինին հին մտապատճենները այն ուժն ու ձեր ստանալ, որը անհրաժեշտ է նոր մտապատճեններին առիմիւթցիա անելու համար: Դասաւանդման ժամանակ այս նախապատրաստական աշխատանքը ընկնում է առաջին աստիճանի անալիզի վրայ:

Աննլիջի ժամանակ, երբ հինը և ծանօթն է մշակւում, չը պէտք է նոր ծանօթութիւններից ևս կցել և պատմել, որովհետև գրանուլ աշակերտների լարուածութիւնը և հետաքրքրութիւնը կարող է թուլանալ: Նորը և հինը, առաջին և երկրորդ աստիճանի նիւթերը պէտք է իրարից շատ խիստ զատուեն և ֆրար շխառնուին: Անալիզը պէտք է լինի «մանրամասն և նոր նիւթի բոլոր մասերին յարաբերող և ապագայ գասաւանդման տրամադրութիւնն ու գոյնը իր մէջ պարունակող»: Այդպիսով ապագայ քննելիք նիւթին վերաբերող մտապատճենները մեծ չափերով կը վերաբաժնեն: աշակերտը աղատ շարժումի կը դնէ իր գիտակցութիւնը և եթէ երբեմն երկրորդական բաներ էլ ասի, ներողամիտ պէտք է լինել, որովհետև վերապատմելու և ամբողջապահումի ժամանակ կարելի է այդ բացը լայնել: Այս վերցիշումները և մշակումները պէտք է խօսակցութեան եղանակով տարուեն:

Սինթէջ. Այս նախապատրաստութեանը յաջորդում է երկրորդ-սկնեթ գ-աստակիննը, որի ժամանակ նոր իմացութիւններ են արևում աշակերտներին և մշակւում: Նորը մշակելու մեթոդը տարբեր է նայած աշակերտների հասակին և առարկայի որակին: օր ցած դասարաններում հեքեաթը պէտք է պատմել, ևսկ մեծ աշակերտներին աստուածաշնչի կամ լեզուական մի կտոր կարդալ, աշխարհագրական մի նիւթի խօսելով և նկարելով, ֆեղիքական մի նիւթի պատմելով և եքսպերիմենտներով գասաւանդելը նոր մտապատճենները պէտք է աշակերտները աւսուցչի օգնութեամբ վերակազմենա:

Նոր նիւթը չը պէտք է միանգամից տալ և ապա մշակել, այլ կտոր-կտոր, մի կտորը առանձին պէտք է պարզաբանել, անհասկանալի մասերը բացատրել, որպէս զի եկող կտորների հետ պարզուած մասը կանոնաւոր յարաբերութեան մէջ մտնի, այն ինչ անորոշ և մուլթ կը մնայ, չի կարող հաճոյք արթնացնել և ազգել աշակերտի մտքի վրայ: Երբ կարդացուեր կամ պատմուել է մի կտոր, դրան յաջորդում է որ և է աշակերտի կողմից կապակից կրկնումը: Աշակերտի պատմելու ժամանակ ոչ ուսուցիչը և ոչ էլ միւս աշակերտները չը պէտք է ընդհատեն նրան, կամ հարցերով և կամ յիշեցումներով, նոյն իսկ եթէ պատմողը լեզուական տեսակեաից շատ էլ լաւ չի խօսում: Պէտք է այդպիսի ազատ պատմելուց յետոյ եղակացնել, թէ նիւթը ինչպէս է ըմբռնուել աշակերտի կողմից և թէ ինչ սխաներ կատարուեցին:

Այդ սխաները ուղղելու, նիւթը աւելի լաւ մշակելու համար առաջին պատմողից յետոյ պէտք է աշակերտների հետ խօսակցութեան միջոցաւ սխաները ուղղել, պակասները լրացնել և ապա այդ կտորը կամ մասը նորեց ամբողջացնել և վերնագիր տալ համաձայն այդ կտորի մէջ եղող գլխաւոր մտքի կամ բովանդակութեան: Այս ձեռով պէտք է յաջորդ կտորները ուսումնասիրել և այսպէս շարունակաբար, մինչև բոլոր ամբողջութիւնները կը վերջանան և ապա դրանց կը յաջորդի ամբողջ նիւթի ամբողջական վերաբարտադրում և կապակցումը: Մինչև աշակերտների նիւթի լիակատար իւրացումը անհրաժեշտ են բազմաթիւ կրկնութիւններ:

Պատմա-կրօնական նիւթերի դասաւանդման ժամանակ պէտք է հետևեալ տեսակէտով առաջնորդուել: Այդ նիւթերը երկու կողմ ունեն իրենց մէջ: մէկ դէմքերի և անհատների պատահարները և արտաքին յարաբերութիւնները և մէկ էլ այդ երկողութիւնների մէջ թագնուած «արծէքի գատողութիւններ», «հիմնական սկզբունքներ», «առաջնորդող մտքեր», որոնք գոյն ու բովանդակութիւն են տալիս կոնկրետ նիւթերին: Կոնկրետ նիւթը տալուց յետոյ համապատասխան հարցերով պէտք է օգնել, որ աշակերտը կարողանայ այդ հիմնական նկարունքները, հոգեկան կեանքի զարդացման օրէնքները հանել և իր համար պարզել: Ապա այդ կրօնական և բարյական մըտքերը իւրաք մօտ պէտք է դնել և կապակցել:

ԱՍՏԵՎԱՑԻԱ. Եթէ դասաւորման նպատակը միմիայն կոնկրետ նիւթի դասաւանդումը լինի, այն դէմքում մինչև այժմ նկարագրած երկու-անալիք և սինթէզ-աստիճանները բաւական կը լինէին, սակայն ողովիետե դասաւանդման կարերագոյն նը-

պատակներից մէկն է կոնկրետ նիւթերի մէջ պարունակուած աքստրակտ-վերացական գաղափարները և օրէնքները հանել, ուստի և դասաւանդման ժամանակ նաև այդ նպատակին ժառայող այլ աստիճաններ պէտք է լինին: Աքստրակտ նիւթ պատրաստի չի կարելի տալ, որովհետեւ այդ դէմքում նա աշակերտի համար անկենդան, անպայտեցիկ մի նիւթ կը մնայ: Սինթէզ աստիճանի նիւթը պէտք է երրորդ—ասօցի ացի աստիճանում նորից քննել, այդ նիւթին նման, հին փորձառութիւնների հետ համեմատել և ապա դրանցից ընդհանուրը ու վերացականը եզրակացնել և աշակերտներին պարզել: Երբորդ աստիճանում քննուող վերացականը դեռ կոնկրետ մասնակի մոտապատճենների հետ կապեր ունի, այս կապերը սակայն պէտք է վերջացնել՝ նրան աւելի մաքուր վերացական դարձնելով:

ՍԻՍՏԵՄ. Այս նպատակին է ծառայում չորրորդ—սիստեմ—աստիճանը, ուր վերացականը զտւում է, դիտողական նիւթերից կտրում է իր արտաքին կապերը, բանաձեռում է աքստրակտ եղանակով օրէնքը կամ գաղափարը և դրանց դարձնում գիտակցութեանը պարզ ու սրոց: Այս ձեռով ստացած գաղափարները, կանոնները, օրէնքները, սկզբունքները, որոնք այնքան անհրաժեշտ են մարդկային հոգեկան—գիտակցական կեանքի համար, պէտք է համեմատութեան մէջ դրուեն հին, նման օրէնքների, գաղափարների հետ մի սխտեմ կազմելու նպատակով, ինչպէս այդ գոյութիւն ունի «մասնագիտութիւնների» մէջ: Սակայն դպրոցական և գիտութեան սիստեմը իւրաք նման չը պէտք է երևակայել, դրանց մէջ կան դգալի տարբերութիւններ: Նախ դպրոցական զբաղում ները չեն տալիս տրամաբանօրէն կապարեալ գաղափարներ, այլ մանկան սուբյեկտիւ կարելներին համապատասխանող, այդպիսի գաղափարները կարող են «սուբյեկտիւ գաղափարներ» անուանուել, այն ինչ գիտութիւնը. ճգտում է կազմել տրամաբանական տեսակէտից ուղիղ գաղափարներ: Բացի այդ, գիտութեան սիստեմը հիմնուած է տրամաբանական ոգու վրայ: Ամեն մի կտոր այդ սխտեմի մէջ իր անփոփոխելի տրամաբանական տեղն ունի: Դպրոցական գիտութեան կամ սխտեմի մէջ չը կայ այդպիսի տրամաբանական անհրաժեշտութիւն և հետեւղականութիւն: Այս, ինչ որ գիտութեան սիստեմի մէջ առաջնութեան է ըռնում, կարող է դպրոցական սիստեմում վերջին տեղը բռնել և ընդհակառակին: Դպրոցը սիստեմ կազմելիս ի նկատի է ունենում սուբյեկտիւ հոգեբանական պատճառները և կարելները: Սակայն դպրոցական սիստեմի վերջնական նպատակին է մօտենալ գիտութեան սիս-

տեմին, իր հոգեբանական տեսակէտով՝ դասաւորած նիւթեքը վեց կ վերջոյ կարգաւորել գիտական տեսակէտով:

Մեթոդ. Մինչև այժմ քննուած աստիճանները աշակերտներն այս ու այն ձեռվ իմացութիւններ էին տալիս և այդ նիւթեզը մշակում: Սակայն ի՞նչ արժէք ունին այդ իմացութիւնները, եթէ աշակերտը չի կարող գործադրել, հարկաւոր ժամանակին: Ինչի՞ պէտք է այն օրէնքը, այն գաղափարը, եթէ աշակերտը դրանց համապատասխան կոնկրետ գէպերի ժամանակ չի գիտակցում օրէնքի, գաղափարի ներկայութիւնը: Մինչև չորրորդ աստիճանը աշակերտը դիտողականից ըարձրանում է գէպի զուտ աբստրակտը-ընդհանութը: Այս ընդհանութից սակայն նորից պէտք է իջնել գէպի կոնկրետը, մասնակին, որպէս զի աշակերտը վարժուի գաղափարների գործադրութեանը: Այս կարիքին կոչուած է բաւարարելու հինգերորդ աստիճանը՝ մեթոդը:

Այս աստիճանում սիստեմի կարգաւորումը այլ կերպ է փոփոխւում, նոր նիւթ է տրւում՝ որպէս զի աշակերտը կարսողանայ օրէնքի կիրառումները տեսնել, գործադրել ամենամբ: Այս եղանակով դործունիութիւնը աշակերտի հոգին կը գարձնէ շարժուն, կենդանի և կօմքինացիաների ընդունակի: Այս վերջին աստիճանի մշակումից յետոյ «մեթոդական միութիւնը» հասնում է իր վախճանին:

Հինգ ձեւական աստիճանները պէտք է գործադրել ամեն մի առարկայի և նիւթի գասաւանդման ժամանակ տռանց բացառութեան. քմահամ վերաբերմունք գէպի աստիճանները անթույլատրելի է:

Ցիլերի այս տեսութիւնը դպրոցական կեանքի վրայ ունեցաւ մեծ ազդեցութիւն և հեռու չէր լինի ճշմարտութիւնից այն պնդումը, թէ Ցիլերի այս տեսութիւնը մինչև վերջին ժամանակները եղել է ամենաարագուածը, ուժեղը և ճերարտ Ցիլերեան ամենամեծ մանկավարժական բանակից պաշտպանուածը: Ցիլերը լինքը ադիտատօրական ընդունակութիւնների տէր մարդ էր և ամենամեծ աղդեցութիւններ իր տեսութեան տարածման վրայ: Ոանաւանդմեծ նշանակութիւն ունեցաւ այս ինքը ընդարձակման դորժում Կայպցիք համարարանում 1862 թուին հիմնուած մանկավարժական ունինարը իր փորձնական դպրոցով, որտեղ աւարտողները, յացտնի գարձած մանկավարժները, մեծապէս նպաստեցին Ցիլերի գաղափարների տարածմանը: Այս ուղղութեամբ ոչ պակաս նշանակութիւն ունեցաւ նաև Ցիլերի կողմից հիմնուած և ներկայում եռ գոյութիւն ունեցաղ գեր-

մանական «Գիտական մանկավարժութեան ընկերութիւն»ը:

Ցիլերի դասաւանդման տեսութիւնը որպէս զի ընթեցողի համար աւելի պարզուի, տալիս ենք Ցիլերեան դպրոցին պատկանողներից մէկի ձեւական հինգ աստիճանների միջոցաւ մշակած մի օրինակելի դաս *):

ՈՐՈՇԱՑՈՂ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

(Մեթոդական միութիւն աբստրակցիայի պրոցեսով):

1. Եւ Ա. Ասինան

Առաջին ու երկրորդ աստիճանները չեն կարող այսաեղ առանձին առանձին մշակուել, որովհետեւ առաջին աստիճանը բնականաբար սաների փորձառութեան շվանին համապատասխան պէտք է լինի: Յատկապէս պէտք է այսաեղ մատնացոյցանել առաջին աստիճանի նիւթի տպաւորման բացառիկ գէպը, երբ առարկայի արտաքինի տպաւորումը տեղի չպիտի ունենայ, որովհետեւ այս կամ այն սանն այս մասին կարող է այս կամ այն բաների մասին խօսել, ինչ ոս մէկ ուռիշը գեղատել չէ, և որը հետեւաբար սրա համար դատարկ խօսքի նշանակութիւն կունենար: Նոյն հիմունքով այն բնապատմական ընթեցումը, որ առարկաների արտաքինի մանրամասնութիւններն է տալիս, առաջին աստիճանի բանը չէ, ինչպէս որ կարելի էր ենթագրել. յետոյ նրա յատուկ տեղը մենք ցոյց կը տանք:

Եզ, ոչիսար, ալձ:

1. Եզ.

Գիտական մանուկների հարուստ փորձառութեան մատերիալի գործագրութիւն: Գիտել, մասնաւորապէս ստամաքայլ յարգարումը, որի համար պէտք է օգուտ քաղել տնային մորթ անելիս: Նատ գիտողական խնդիրներ! Կճղակների համաճարակը չը մոռանալ!: Նկարագրել այս նախագծով. 1. Առարկան իրեւ ամբողջ բնական օրգանիզմի մաս, 2. իրեւ անհատ, ուրեմն օգուտը, սննդառութիւնը, կեանքի եղանակը, արտաքինը:

2. Ալձն ու ոչիսարը:

Նկարագրութիւն նոյն ընթացքով նախապէս տեղի ու-

*) Օրինակը վերցրած է Յ. Տէր. Միքարեանի «Ուղեցոյց դասաւանդման» գրքից: Ով ցանկանում է ծեւական աստիճանների տեսականի եւ գործնականի հիտ աւելի մօտ ծանօթանալ, թող կարդայ այդ գիրը:

նեցած զւնութիւնից յետոյ, սակայն առանձնապէս վեր հանելով տարբերութիւնները՝ անօդուտ կը կնութիւններից խոյս տալու համար:

Քարայծր (յօրինողական ուշուցման ձևով^{*}) այծի հետ համեմատելով:

1. Օգուտ. Միսն աւելի համեղ է՝ քան այծինը: Մորթին նոյնպէս աւելի թանգ՝ այծինը 4—5 ֆր. քարայծինը համարեա կրկնակի: Այժը շատ անդամ լինում՝ մատզաշ ծառեր և այլն կրծութելու համար: Քարայծը, սարեւի զարդը, բոլորովին անվնաս է:

2. Սնունդ. Խոս՝ այծի պէս շատ սիրում է աղ լիզել, մի հանդամանը, որից որսորդն օգուտ է քաղում: Այժի պէս կերը որոճացող:

3. Կեանիի եղանակը. բնակավայրը. այժը ամառը սարեւի վրայ է լինում (այծարած). նաև քարայծները. սրանք երբեմն ընդհարում են այծերի հօտերի հետ. քարայծները սակայն նաև ձմեռը մեծ քանակութեամբ լինում են բարձր սարերում (բացատրել հնարաւորութիւնը). միայն քչերը վար են իշնում անտառները (անտառային կենդանիներ): Թենամիները: Որսորդը, որսորդութիւնը, փախուստ տալը, բացի սրանից նուրբ հոտաւութիւնն իբրև պաշտպանութեան միջոց: Որսորդական օրէնք: Այծիները. ժայռերից ընկնելը (հազիւ): Ուկըների մնացորդներ սաւցակոյտների մէջ: Հիւանդութիւնը. այծինի պէս՝ կճղակների համաճարակ:

4. Արտաքինը:

ա) Մեծութիւնը. այծից քիչ մեծ, մինչև 80 և 90 ֆունտ ծանրութեամբ:

բ) Գոյնի. Այծերինը զանազան—քարայծները միօրինակ գոյնի: Գարնանը, ամառը և աշնանը ժանդադոյն, ձմեռը համարեա թէ սև, փորը բաց գոյնով, ինչպէս նաև յետել ոտքերն ու աչքերի մօտերքը: Ոտքերն ու կոճակի շերտը միշտ սև: Սպիտակ քարայծները հազուադիւտ:

գ) Գլուխը ինչպէս այծինը՝ գոգաւոր: ձակատոսկը աւելի հաստ՝ քան սրանը: Նատ այծեր առանց եղջեւների—բոլոր քարայծներն եղջեւաւոր, եղջեւըները ծռուած գէպի յետ և գէպի գուրս, սրածայր: Պաշտպանման միջոց արծուի

^{*}) Այսիպէն վերլուծութիւնն ու համարութիւնը շարունակ հիւսելով: Թարգմ.

գէմ: Նատ այծեր մօրուքով, քարայծները՝ երբէք: Ատամները այծի ատամներին նման:

դ) Պարւենոցը. երկար, ինչպէս այծինը:

ե) Բունը. Այժը նիհալ, քարայծը կոլոր, սեղմուած ձեռվ:

զ) Ոտքերը. Այծինն աւելի բարակ—քարայծինը համեմատաբար հաստ: Յետելի ոտքերը համեմատաբար աւելի երկար՝ քան այծինը, գէպի յետ շատ կրուցած, այս պատճառով՝ ցատկելու աւելի մեծ ոյժ: Կճղակները այծինի պէս, սրանցից 2 կլղ կճղակներ ինչպէս այծինը, բայց աւելի երկար (ինչո՞ւ), նրանց կողերն աւելի սուր են լինում և պինդ՝ քան այծինը (ենչո՞ւ):

է) Պոչը ինչպէս այծինը՝ կարճ:

Այծեամբ, եղջեւուն անցնել, եթէ գասաւանդման տեղում կան այս կենդանիները. նախ աւանդել այծեամբ այծի և քարայծի հետ համեմատելով, ապա եղջերուն՝ համեմատելով հիմա արդէն ծանօթ այծեամի և այծի հետ.

Այսպիսով մենք աւարտած կը լինէինք մեր երկրի^{*}) որոճացողները, որովհետև այծքաղ (այծւղջիւր) համարեա թէ այլ ևս չկայ: Խսկ հիմա պէտք է որ մենք օտար երկների որոճացողներին էլ մեր ուսուցման շրջանը մտցնենք: Ի հարկէ և գրանք պէտք է լինեն:

Ուլուն ու արագավազ եղջերուն, որովհետև այս երկու որոճացողներն առանձին կուլտուր-պատմական նշանակութիւն ունեն: Ուզտը նկարագրում է ոչխարի հետ համեմատելով, արագավազ եղջերուն՝ եղջերուի հետ:

III. Ասինան

Նարայարում բոլոր նկարագրուած որոճացողների նման յատկանիշների՝ եւրաքանչեւրի նկարագրութեան համար որոշուած նախագծով: Օրինակի համար արտաքինին վերաբերեալ կէտերը հետեւեալ կերպով կարտայայտուէին.

ա) Մեծութիւն. զանազան: բ) Գոյն. նոյնպէս: գ) Գլուխ.

մեծամասնութիւնն ունի եղջեւներ, ատամնաշարը

բացի ուղտից (նաև վերին ծնօտի վրայ կտրիչներ): դ) Բուն. զանազան ձեռերի: ե) Ոտքերը. բոլոր կճղակաւոր և երկու կեղծ կճղակներ:

^{*}) Հեղինակի խօսքն այստեղ վերաբերում է Շուէյցարիային, Թարգմ.

IV. Ասինան.

Սիստէմի տետրակում. Որոնացողները:

1. Մեր երկրում գտնւողները. եղբ, ոչխալը, այծը (ընտանի կենդանիներ), այծեամբ, եղջերուն քարայծը (վայրի):
2. Օտար երկրների որոնացողները. ուղտը, աշագավաղ եղջերուն: Յատկանիշներ. բոլորն էլ օդակար են: Բոլորն էլ սնունդ են առնում խոտերից և կերը որոնում են երկու անգամ: Մեծամասնութիւնը երկու եղջեր ունի: Առամնա-

— . 12

շարը — : Ուղտը վերին ճնոտի վրայ էլ կտրիչներ ունի:
8 . 12

Բոլորը երկեցակաւոր են և ունին նաև երկու կեղծ կճղակներ, որոնք ման գալու համար պէտք չեն գալիս: Բոլոր կճղակաւորները կարող են կճղակի համաձարակից բռնուել:

V. Ասինան:

1. Նկարել եղջերներ, կճղակներ. ստամոքս:
2. Արագ լիբացով թիրեցանուրին. Կարդալ ընթերցարանում զետեղուած այս կենդանիներին վերաբերեալ յօդւածները: (Մենք նպատակից վեր բան արած չենք լինի, եթէ ի միջն այլոց կարդայինք միջն դասարաններում կարեսը նիւթեր բարձր դասարանների ընթերցարաններից և հակառակ գէպումն էլ՝ նպատակից վատ բան արած չենք լինի):

3. Քնապատմական պատկերների զործալրութիւնն. ա) Գանել տալ նկարագրուած կենդանիները: բ) Զնկարագրուածներն իբրև որոնացողներ ճանաչել տալ (վարժութիւն խորհելու հմտութիւն ձեռք բերելու մէջ): Եթէ շատ լաւ պատկերներ ձեռքի տակ կան, այս գէպում յօրինողական դասաւանդման ժամանակ (քարայծ, այծեամ, ուղտ և այլն) նրանցից օգուտ պէտք է քաղել արդէն լ) առափնանի վրայ:

A. Florin. (in den Bündener Seminarblättern I.).

Նոր մանկավարժներ.

Վ. Բայն.

Ցելէր անմիջական տշակերտներից ներկայում ամենաշաղկեցիկ մանկավարժը նայի պրօֆեսոր Բայնն է: Նա Հերշեարտ—Ցելէրեան պարոցի ուժեղացմանը նպաստեց ոչ միայն երբ պրօֆեսոր և մանկավարժական գրող, այլ գլխաւորապէտ իբրև նայի համալսարանի մանկավարժական սեմինարի

և վարժութիւննակ ղեկավար: Պիկելի և Շելէրի հեռ միամբն աշխատասիրած «Փողովրդական գոլոցների թէօրիան և պրակտիկան» գրուածքում աշխատաւմ է Բայնը իր ուսուցչի մտքերը պարզ ու մատչելի օրինակների, բացատրութիւնների մըցցաւ մօտեցնել ժողովրդական գոլոցների գործնականին: Այս գրուածքը նախաբանում հեղինակները գրում են. «Ամսադրից ուշադիր ընթերցողները այն համարումը պէտք է կաղմեն, որ հեղինակները ամեն կերպ ձատել են մօտ կապերով միանալու և այլպիսի Ցելէրեան սեմինարի աշխատանքների հետ, որովհետև նրանք հաւատացած են, որ Ցելէրի Հերարտական կիմկապարումը մի իրական բերարտական գործականութիւն ունի մեր ամսադրութիւնը զարմարութիւնը կերպարանավորելու և նորոգելու»: Այս խօսքերի մէջ պարզ աշտայայառած է Բայնի վերաբերմունքը Ցելէրի իրէաներին՝ նա իր գոլոցական և գրական գովծունէութեան ընթացքում ձգտել է և ձգտում է իրկուուր որբո՞ն կարելի է մօտ կապերով միանալ իր ուսուցչի «Այլպիսի ու մինարդական աշխատանքներին», ուստի և անհրաժեշտ չենք նկատում տալ այստեղ Բայնի դասաւանդման աեսութեամբ ամբողջական պատկերը, որովհետև ընդհանուր գծերով այդ նման է Ցելէրին, այլ կը բաւականանանք նրա կարծիքներից մի քանիսի նկարագրութեամբ:

8969-56

Չետին աստիճանների աեստական հետարումը Բայնի մօտ կատարուած է այնպիսի պատմառարանութիւններով, որոնք կը կնուում են ճամարեա բոլոր աշքի ընկնող Ցելէրեանների մօտ: Սովորել հոգեբանական մի ական է, որը իրականանում է որոշ մնացուն օրէնքներով. հոգեկան կեանքում իշխում է այնպիսի մի օրէնաւորութիւն, ինչպիսին գոյսութիւն ունի արտաքին ընսութեան մէջ: Գիգակութեան (դասաւանդման աեսութեամբ) պէտք է ընական եղանակով սովորելու ժամանակ կեր խաղացող օրէնքները ճանաչէ և իր աշխատանքը այդ օրէնքներին յարմարեցնէ: Որմէնք են այդ օրէնքները: Առաջնորդ առաջարկան պատերազմական պարագաների օրէնքն է, ըստ որի բացարձակ նորը, որը սովորողի դիտակցութեան մէջ նման, ծանօթ մատապակերները նոր իմացութեան իւրացման անպայման հիմունքներն են: Խրկորդն է ապատակացիայի օրէնքը, ըստ որի կոնկրետ իմացութեաններից կազմուում են ընդհանուր գաղափարներ և օրէնքներ: Որպէս զի այս վերջիններս կարողանան հոգեկանի մէջ հիմունքներ բռնել, պէտք է նախօրօք



հաւաքուին բազմաթիւ մասնակի, կոնկրետ մտապատկելներ, որոնցից ապա ընդհանուրը ալպտրակցիայի (վերացման և ընդհանրացման) միջոցաւ զատում, աւանձնանում է: Այս օրէնքները երենց ուժի մէջ են մնում նաև ոռլորական, ընական ըմբռանումների ժամանակ և մէջ հոգեկան կետնքը առանց մէր լամբի և ցանկութեան ենթարկում է այդ օրէնքներին: Սակայն հոգեկանի ընական գործողութեան ժամանակ մի երկայն օրէնքը ևս գոյութիւն ունի: Եսը իրական նիւթերից գաղափարներ ենք հանել, այսուհետեւ ձգտում ենք մէջ ստացած գաղափարը, կանոնը կամ օրէնքը գործադրել և նրա կիւառումը տեսնել այլ մասնակի վէպքերի մէջ, որոնք սակայն իրենց էութեամբ մօտ են մեզ զբաղեցնող օրէնքին: Աւրեմն հոգեկանի ընական զարգացման ընթացքում երեք միջ գործողութիւններ են կատարուում: Հինի միջոցաւ ըմբռանում ենք կոնկրետ նոր նիւթերը, ապա այդ նիւթերից գաղափարին-ընդհանրականին ենք անցնում և վերջապէս այս վերջինից նորից ենք դէպի կոնկրետը և մասնակին: Ամեն մի գասաւանդում, եթէ չի ուղում հակահոգեկանական, անընական զրութեան մէջ ընկնել, պարաւոր է հետեւ հոգու գործունէութեան վերաբերեք յիշուած ընթացքին: Զեական հինգ աստիճանները տրամաբանական եղբակացումներ են մարդկային հոգու մէջ գործող մնայուն օրէնքների և որո՞ինետեւ այդ աստիճանները անփոփոխ օրէնքների վրայ են հիմնուած, ուստի և նոքա ընդհանուս և անվիճելի արժէք ունին:

Այն հարցին, թէ ամեն մի մեթոդական միութեան մէջ պէտք է կերպառել հինգ աստիճանները միտասին, բայնը զանազան ժամանակներ զանազան բացատրութիւններ է տուել նոյն իսկ իրար հակասող: «Գիտական մանկավարժութեան ընկերութեան» Վայրմարում տեղի ունեցած նիստերից մէկում բայնը հետեւալն է յայտնում: «Եթէ մենք աստիճանները ամեն մի մասի մէջ գործադրենք, ապա զասաւանդումը կը գառնար չոր, զանգազ»: Նման սպով է արտայայտուում բայնը նաև իր «Ճողովքական գպրոցների թէօրեա և պրակտիկա» գրուածքի առաջնական մէջ, ուր ասում է: «Ցիւլէրի այն պահանջը, թէ ամեն մեթոդական միութիւն ըստ ձևական հինգ աստիճանների պէտք է մշակել տանում է անպայման զէպի արհեստականութիւն: Աւը սիստեմատիկական նիւթ չկայ, ինչո՞ւ պէտք է աշխատել անպայման այդ պիմին ունենալ: . . . Աւրեմն աղատութիւն գործադրութեան մէջ, ուր ասում է: «Ցիւլէրի այն պահանջը, թէ ամեն մեթոդական միութիւն ըստ ձևական հինգ աստիճանների պէտք է մշակել տանում է անպայման զէպի արհեստականութիւն: Աւը սիստեմատիկական նիւթ չկայ, ինչո՞ւ պէտք է աշխատել անպայման այդ պիմին ունենալ: . . . Աւրեմն աղատութիւն գործադրութիւն մէջ» (այսինքն ձևական աստիճանների): Բայնը ապացուած, նոյն գրուածքի վերջին տպագրութիւնների մէջ

վերեւ յիշուածի տեղը այլ, միանդամայն հակառակ կարծիք է պաշտպանում: «Դաստանանդման ամեն մի կտոր, որը երբեմեթոդական միութիւն է ընդունուել, պէտք է ձևական աստիճանների միջոցաւ մշակուել . . . Դաստանանդման ըոլոր ձեւը մէջ պէտք է ձևական աստիճանները գործադրել, եթէ կանգերը կմացութեան նիւթերի և մտապատկենների խմբակցութիւնների մշակմանն է վերաբերում: Արգելուած պէտք է համարել նիւթի մշակման ժամանակ որ և է աղատցանկութիւն կամ քմանաձոյք: Բայնի աշակերտներից մէկը— Պայմ, իր ուսուցչի կարծիքների այս փոփոխութիւնը նոյն խնդրի աւելի խորն և ճիշտ հատկանալու հետեւանքն է համարում: Պայմի այս կարծիքը հակառակութիւն կողմից երաւամբ կատկածելի ճշմարտութիւն պարունակող է ընդունուում:

Դէօրպֆելդ:

Ալժէ ծանօթանալ Հերբարա—Ցիւլէրեան գլուցի մի այլ ականաւոր ներկայացուցչի հետ ևս, որը պակաս նշանակութիւն չունեցաւ ձևական աստիճանների թեթև վերամշակման և տարածման գործում: Այդ մանկավարժը քր. Վ. Դեօրպֆելդն է: Դէօրպֆելդը սակայն Ցիւլէրի անմիջական աշակերտը չէք, թէև նրա հիմնական կարծիքները այնպէս են մօտենում Ցիւլէրին, վերջինից օրուց կարծիքներ այնպէս են պաշտպանութիւն գրունում Դէօրպֆելդից, որ նրան կարելի է իրաւամբ Ցիւլէրի հետեղ և հաւատարիմ յաջորդ համարել: Դէօրպֆելդը շատ էր բարձր գնահատում Ցիւլէրին: Նրա «Գաղափարների գլուցական կոթութիւն» գրուածքի հետեւալ կոսոր պարզ այդ է ցոյց տալիս: «Ցիւլէրի ընդհանուր գասաւանդման աեսութիւն գիրքը անվիճելիքուն ամենաանուարուկտիւ երկն է, որպիսին մանկավարժական գրականութիւնը գասաւանդման էութեան և նշանակութեան մասին մինչև օրս ունի»: Սակայն պէտք է յիշել նաև այն, որ Դէօրպֆելդը ընդհանրապէս ինքնուրոյն և աղատ մտածող մի մանկավարժ էր: Ցիւլէրի և Դէօրպֆելդի մտքերի շատ անդամ իրար նմանուելը պէտք է բացատրել այդ մտածողների նոյն հոգերը հայր ոււնեալուց, որը երկուսիցն էլ հանձարեղ փիլիսոփա-մանկավարժ Հերբարան էր:

Դէօրպֆելդի կարծիքով գասաւանդման նպատակն է տալ երեսաններին ուղիղ, որոշ ու պարզ գաղափարներ: Կոնկրետ նիւթերը չեն կարող գասաւանդման նպատակը կազմել, նրանք միմիայն միջոց են գաղափարներ հանելու նպատակի համար: Սակայն ի՞նչ է գաղափարը և ի՞նչպէս է յառաջանում կոն-

կըետ նիւթեցից: Այդ խնդրի մանրամասն քննութեւնը Գէօրգւ ֆելզին այն եղակացութեան է բերում, որ գաղափարը իրեւ և գործողութիւնների մէջ գոյութիւն ունեցող ընդհանուր յատկանիշների ժողովածուն է. այս գէպըում չեն կարող երեւ զուտ անհատական, միմիայն մի իր համար նշանակութիւն և արժէք ունեցող յատկանիշները գեր խաղալ: Հայեցողութիւնը ընդհանուր է առնում այն բոլոր էական և եղլորդական յատկանիշները, որոնք կազմում են մի անհատական իր կամ երեսիթի բուն էութիւնը:

Գաղափարները մեզ այնպէս չեն արուած, ինչպէս բնութեան զգայական իրերը, այլ միմիայն եղակացում են հայեցողութիւններից (Auschauung), այսինքն իրար նման իրողութիւնների ընդհանուր նման կողմերը միանում են և կազմում գաղափարը բովանդակութիւնը: Դատ յաճախ այդ գաղափարները չեն յառաջանում նպատակադրութեան և անհատի կամեցողութեան մէջոցաւ, այլ աննախազից եղանակով, հինգ բնական իրեւի գարդացմամբ, ուստի և այդպիսի գաղափարները կավոր են «ընականածնունդ» (naturwüchs) կոչուել: Սակայն հոգեկան մեխանիզմի մէջոցաւ աննպատակ, անկամ և բնական եղանակով յառաջացած այս գաղափարները համարեա միշտ էլ լինում են անկատար, անսուշ, մուտք և երթեմն էլ բոլորովին սխալ: Ահա այս հանդամանքը անհբաժեշտ է գալձնում կըթական-դասաւանդչական զբաղման հոգուը, որի ժամանակ գործադրուել որոշ նպատակների և պլանների մէջոցաւ աշակերտներին տըամաբանորէն ուզեղ գաղափարների իւրացման ենք հասցնում:

Դպրոցում գաղափարներ կազմելու արհեստական եղանակը պէտք է նմանուի բնական գաղափարների յառաջանաւը մեթոդին և որպէս զի ցանկալի նպատակների համար, պէտք ուսուցման հետեւալ ակտերը կատարէ և իրար յաջորդեցնէ:

1 Ուսուցման ակտ: Այս ակտի ժամանակ գաղափարը կազմելու համար հարկաւոր հայեցողութիւններ պէտք է ձեռք բերել և մշտկել:

2 Ուսուցման ակտ: Առաջին ուսուցման ակտի մէջ քննուած հայեցողութիւնների ընդհանուր նման յատկութիւնները պիտի ջնկուին: Նիւթի մշակման գլխաւոր ձեռք այսուղ համեմատեն է, որովհետեւ համեմատութիւնների միջոցաւ հնարաւոր է նման յատկանիշները զատել:

3 Ուսուցման ակտ: Այսուղ երկրորդ ակտի մէջ գատուած յատկութիւնները գաղափարը անուան տակն են դրւում:

4 Ուսուցման ակտ: Այստեղ հոգացւում է սատացած գաղափարի գործադրութեան համար, ուսուցիչը փորձում է իմանալու, թէ գաղափարը ճիշտ ու ովոշ է հասկացուել աշակերտների կողմից և ապա միջոցներ է ձեռնարկում գաղափարը ամցացնելու և գործադրելի գարձնելու համար:

Այս նկարագիրներից պարզ երկում է Ցիլերի և Գէօրգվելզի նման և տարբեր կողմերը: Դասաւանդման ընթացքը Ցիլերի և Գէօրգվելզի մօտ ընդհանուր գծերով իրա նման են:

Գէօրգվելզը դասաւանդման այս ակտերի մասին մի այլ կարծիք ունի, որը չի կարելի Ցիլերի հայեցքների հետ հեշտութեամբ հաշտեցնել: Եթա կարծիքով մինչեւ ուժի տարեկան երեխանները մի առանձին սէր և ընդունակութիւն են ցոյց տալիս հայեցողական նիւթերի իւրացմանը. իսկ միւս ակտերը հնարաւոր չափելով պէտք է գործածութեան վերցնել, առանց գերադասութիւն տալունը: 9—11 տարեկան երեխանները գտնելու, քննելու մեծ ուժ ուժ արամագրութիւն են ցոյց տալիս, ուստի և այդ հասակում պէտք է ապսարակցիայի ուժը ի նկատի ունենալ և գործի վերցնել: Այս աստիճանում աւելի գերեշխող գեր են ստանձնելու ուսուցման երկրորդ և երրորդ ակտերը: Եւ վերջապէս 12—14 տարեկան երեխանները մեծ ձգտումներ են ցոյց տալիս իրենց սովորածները գործադրութեան զնել, փորձել և ինքնուրոյն աշխատանքներ կատարել: Այս ասթերի շրջանում դասաւանդումը առաւելապէս չուրորդ ակտի գործադրութիւնը պէտք է ընդլայնէ: Այս իրողութիւնը ուսուցչին պէտք է այն եղակացութեան ըերէ, որ գատաւանդման ձեռք փոփոխելի է ըստ հասակների հետ կապուած հոգեկան որոշ կողմերի զարգացման և ուսուցման ակտերի աստիճանաւորման մէջ գոյութիւն ունեցող պարագայիցիք:

Գէօրգվելզի Ցիլերից տարբերող մաքերը այնքան մեծ չեն, որպէս զի վերջնիս ձետեկան աստիճանների հիմնական պատերը առաջնի մօտ փոխուել:

Զայ ֆերտ.

Զայֆերտը չէ պատկանում Ցիլերեան գպրոցին, սակայն որոշ խնդիրներում բաւականին մօտենում է Ցիլերի դասաւ

ւանդման տեսութեանը: Ըստունելով՝ որ գասաւանդման ժամանակ գործունէութեան որոշ աստիճաններ պէտք է կիրառված, այդ աստիճանների հիմնաւորումը ջայֆերաբ անկախ է կատարում և նրա հողմից այդ նպատակով օգնութեան վերցրած հոգեբանական օրէնքները և հայեացքները աւելի մօտենում են Վունգի ուսումնասիրութիւններին, քան Հելլուրաբի:

Դաստիարակութեան, ինչպէս նաև գասաւանդման ընդհանութ նպատակն է անհատի «աստիճանական հոգեկանացումը» (Durchgeistigung): Հոգեկանացման գործողութիւնը բարձրանում է զգայական ըմբռնումներից դէպի մտածողական զննողութիւնը, զգայական հաճոյքից դէպի հոգեացութականութիւնը, կարծ զգայական անկատարից դէպի հոգեկանը, կատարեալը: Հոգեկանացման այս պրոցեսը կատարվում է հոգեբանական օրոշ օրէնքների հիմն վրայ, որը զեղակատիկան պէտք է ճանաչէ և իս զբաղմունքների ժամանակ կիրառէ:

Առաջին հոգեբանական օրէնքն է «հոգեկան զարգացող աճումը»: Եթե հոգեկան էլեմենտները երար են պատահում, այդ մեացումից ոչ միմիայն գումարումն է կատարվում, այլ կազմում են հոգեկան այնպիսի պատկերներ, որոնք հիմնական էլեմենտների մէջ գոյութիւն չունեցող յատկութիւններ ենցոյց տալիս: Միացման ժամանակ հոգեկան էլեմենտները երեսցից դուրս են դալիս և հիմունք են զառնում աստիճանաբար զարգացող հոգեկան ուժերի:

Երկրորդ օրէնքը կոչւում է «զարգացող կուպակցորեան» օրէնք: Նաև հոգեկան շէնքի քարեսը երար կողք-կողքի են լինում առանց խորն և ներքին յարաբերումների, առա այդ էլեմենտները մտնում են աստիճանաբար աւելի հաջուստ կապակցութիւնների մէջ բանական կամ զգացողական ընդիւննենալով: Այս ուղղութեամբ զարդացման վերջին աստիճանն է կազմում ոչ հակասական աշխարհաճայեացքը:

Երրորդ օրէնքը կոչւում է «զարգացող խացման» օրէնք: Էստ այս օրէնքի կոմերետ մասնակի երրորդութիւնները միասին գառնում են իր մտապատկերներ, որանք զարգափարներ, նման զարգափարները վերին ընդհանուր զարգափարներ, դետած ըմբռնումները կանոններ և օրէնքներ, մասնակի զգացումները արամագրութիւններ և ձգտումներ, հոգեկան վիճակները և կամքային ակտերը-գործունէութեան ոկղունքներ:

Չորրորդ օրէնքը կոչւում է «զարգացող մեխանիզմի» օրէնք: Մեր հոգեկան կեանքը միացած է մարմնականի հետ և կարեք

ունի այս վերջինի գործակցութեան: Աստիճանաբար մարմինը դառնում է հոգուն հնագանգ: Վարժուած շարժումները աւելի հեշտութեամբ են կրկնուում և հոգեկան ցանկութիւններին ենթարկուում, որով հոգեկան ուժի ծախսման աւելի քիչ կարգի զգացուում: Այս ինչ առաջ կամքից ուժ էր պահանջում, այսուհետեւ գառնում է մեջքնայական, համարեա անդիտակից վերակրկուող: Այս երրորդութիւնը հնարաւոց է զառնում հոգեկան կեանքի մէջ տնտեսութեան սկզբունքի ներկայացութեամբ: Որոշ գործողութիւնները մեջքնայական զառնուով, հոգու անտեսուած ուժը կարողանում է հոգեկան աւելի բարձր կեանքում աղըքել:

Սորո են հոգեբանական այն օքէնքները, որոնք պէտք է ի նկատի առնուեն գասաւանդման ժամանակ և որոնց վեաց Զայֆերաբ հիմնում է զառնում զաջորդական աստիճաններ:

Սովորելու ամեն մի զարծողութիւն կոմքի մի ակտ է: Կամքը հիմնաւուած է զգացումների վրայ, ուստի և նախ հարկաւոր է աշակերտի մէջ զգացումներ և համապատասխան տբամտգրութիւն այթնացնել, նոր նիւթը հասկանալու համաց հարկաւոր նախապարատութիւնները տեսնել հին ծանոթ մասպատկերները վերաբարդելու մէջոցաւ և ապա միմիայն նոր նիւթը տալ: Այս առաջին աստիճանը կարելի է «հայտապատճենական» կամ «Տարբայրով» առ տիճան կոչել:

Երկրորդ, — Առ նիւթի «հետական» — աստիճանը հիմնուում է հոգեբանական առաջին կամ «զարդացող աճման» օրէնքի վրայ: Նոր նիւթը աշակերտ պէտք է ըմբռնէ մտածելով կամ երկայութեամբ, զգայօրէն կամ զգացումնալի: Նախ պէտք է ըմբռնել առաջ ընդհանուր պատկերը (Gesamtbild) և ապա ընդհանուրի մէջ պարունակուած մասնակի երեսցները: Աշակերտի անկախութիւնը, ինցնագութութիւնը պէտք է միշտ յարգուած և գործի զրուած լինի:

Երրորդ «հիմնական մօւկիւն» աստիճանը ըարձանում է հոգեբանական երկրորդ և երրորդ — «աճող կապակցութեան և աճող խացման» օրէնքների վրայ: Այս աստիճանում հանուում է մասնակից ընդհանուրը, կոմիկետից ապստբակտը և մի որոշ բանաձեկի տակ զրուում: Նոր նիւթը համեմատութեան է զրուում ուրիշ ծանօթ և նման նիւթերի հետ, որով գրանց մէջ պարունակուած ընդհանուրը աւելի հեշտութեամբ է պարզուում: Երբեմն այս աստիճանում կարելի է մասնաւոր ընդիւթ կրող իմացութիւնները կամ զարդարաները մի սիստեմի վերածել և այդ պիտով ցըիւ մնացած ծանօթութիւնները ամբողջացնել:

Զորբորդ, «գործածութեան» կամ «գործադրութեան» առափեճանը հիմնուում է հոգեբանութեան չորրորդ, «աճող մեխանիզմ» օքէնքի վրայ: Այսոտեղ հմգացւում է սովորցրած նիւթերի գոլծադրութեան համար, աստիճանաբար, համապատասխան երեխաների զարգացմանը. այս աստիճանը կորցնում է իր ինքնուբոյն դոյութեան իրաւունքը և ձուլում է միւս աստիճանների ետ:

Այս նկարագիրներից ուշագիր ընթերցողի համար կը պարզուի Զայֆերտի դիրքը գեղի Ցիլերը, որը ինքը հետեւեալ կերպ է ըսուրշում: «Դասաւանդման իմ աստիճանները շատ կողմերով մօտենում են Հերբարտ—Ցիլերեանների ձեւական աստիճաններին: Սակայն աստիճանների եզրակացնելը հոգեկան զարգացման օքէնքներից և երրորդ ու չորրորդ աստիճանների տարբերուելը Ցիլերի համապատասխան աստիճաններից հնարաւոր են գարձնում զասաւանդման պրոցեսի այսպէս ստորագրաժանելու իմ առաջարկը ինքնուբոյն և իրաւացի ընդունելու: Բացի այդ մի տարբերութիւն ևս, ես ընդունում եմ ամբողջ ստորագրաժանումը և ամեն մի աստիճանի արժեքը փոփոխական. այսինքն դպրոցական տալիների և աստիճանական զարգացման ընթացքում ամեն մի աստիճանի սահմանները աստիճանաբար իրար մէջ են խառնում և աստիճանները այդպիսով փոխում են իրենց ընաւորութիւնը և իրենց փոխադարձ դիրքը: Փոփոխականութեան ոկղունքը թոյլ է տալիս ամեն մի աստիճան նոյնպէս ըստ հոգեբանական օքէնքների բաժանել. օր, առաջին աստիճանի նիւթը կարող է մշակուել միաժամանակ եվլորդ երսորդ և չորրորդ աստիճաններին թոյլ կերպով համապատասխանող ընաւորութեամբ: Կոյնը նաև միւս աստիճանների վերաբերմամբ կարելի է պնդել:

Մենչեւ այժմ նկարագրած մանկավարժները մէծ կամ փոքր չափերով կապուած էին Ցիլերից: Խղած նկարագիրները ըստ առկան են ցոյց առալու Ցիլերի և իր դպրոցի մատածողութեան դլաւոր գոյնը ձեւական աստիճանների վերերամամբ: Այժմ տանը Ցիլերի տեսակէտի հակառակորդներից երկուսի մտածողութեան ընթացքը, որով ընթերցողը հնարաւորութիւն կունենայ հեշտութեամբ երկու տեսակէտների համեմատութիւնները կատարելու և մի որոշ եզրակացութեան գալու: Այդ հակառակորդներից նաև աստիճաններից համապատական անցեալով յայտնի է Յօն Զալվիերիը, իսկ երեսակացներից համապատական անցեալով յայտնի է Յօն Զալվիերիը, որը պատճենագործութեան մէջ է առաջարկուել առաջարկութեան մէջ:

I. Ֆան Զալվիերի.

Ես Յօն Զալվիերիը Ցիլերեան դպրոցի վաղուց յայսնի հակառակորդն է, թէև իր մանկավարժական հայեացըները միշտ էլ աշխատել է հիմնել Հերբարուի վրայ:

Զալվիերիը ևս Ցիլերի պէս հաւատացած է, որ որոշ օքէնքների վրայ հիմնած գասաւանդման մի կարգաւորեալ մեթոդ «գեղագիտիկական նորմալ ձևերով» (աստիճաններով) անհրաժեշտ է, որովհետեւ գա է միակ հնարաւոր միջոցը գասաւանդման խնդիրը պարզելու համար:

Դասաւանդման նպատակը որոշելու ինդրում Զալվիերիը համաձայն չէ ոչ Ցիլերի և ոչ էլ նոյնիսկ Հերբարուի հետ և դա համարում է այն կէտը, ուր նրա դասաւանդման տեսութիւնը «վերջնականապէս հետանում Ցիլերի վարդապետութիւնից», որովհետեւ նրա կարծիքով դասաւանդման նպատակը ամփոփուած չէ ոչ «բազմակողմանի հետաքրքրութեան» և ոչ էլ աշակերտների կրօնաբարոյական կրթութեան մէջ: Ուսակերտին պիտի պատրաստել և ընդունակ գարճել ազգի և մարդկութեան կուլտուրական աշխատանքին մասնակից անելու:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է աշակերտին մօտեցնել մատերեալ, հոգեկան և բարոյական աշխարհի հութիւնն ըմբռնելուն, որքան այդ թոյլ են տալիս նրա կարողութիւնները: Դասաւանդման գլխաւոր նպատակը պէտք է լինի ներքնապէս կապակցուած իմացութիւններ տալը և ապա աշակերտի հոգեկան ուժեցը հարստացնելը և զարգացնելը: Գիտութիւնների գասաւանդման ժամանակ, որը գպրոցի հական նպատակն է, կարելի է նաև կրօնաբարոյական հայեցակէտներին նշանակութիւն տալ, ուսակայն գրանք կողմնակի երեսիներ են (Nebenerscheinungen) և չպէտք է գըլխաւոր նպատակի խոտորման առիթ գառնան. «դասաւանդումը պէտք է դասաւանդում մնայ»:

Դասաւանդման ժամանակ պէտք է աշխատանքի մի որոշ աստիճանաւորում պահել, որը ըստոր առարկաների նիւթերի մշակման ժամանակ գործադրուելու յարմարութիւն ունենայ: Ցիլերում է արդէն, որ դասաւանդման ժամանակ տրում է աշակերտներին գիտական իմացութիւններ և այնպէս ամբողջացրած, որ դիտութեանը մօտ մսան: Այդ գրութիւնից պէտք է տրամարտանօրէն եզրակացնել այն պահանջը, որ ուսուցչին նաև ծանօթ պէտքէ լինի, թէ զիտութիւնները իրենց նիւթերը լինչ եզրակացներով, մտածողութեան ի՞նչ մեթոդներով են մշակում կամ գիտական եզրակացութիւնների

հասնում, որովհետեւ իմացութեանը վերաբերող մեթոդները գիտութեան և գտառաւանդժան ժամանակ նոյն են: Աթէ ճանաչենք զիտութեան մեթոդների տեսակները, ապա այն ճանաչողութիւնը կունենայ նույն զիտակալիքան արժէք: Զալլվիւհի այդ նպատակով ձեռնարկած ուսումնակիցութիւնները, թէ զիտութիւնները իրենց նիւթը ինչ մեթոդներով են մշակում, հանգչում են ոյն կէտին, որ զիտական իմացութիւնները ձեռք են ըերւում 1. հաւատի 2. զեղուկացնեցի, 3. ինդուկցիոնի և 4. հիպոտեզների մըջոցաւ: Ուրեմն զիտական մեթոդները չըստ են:

Խմացակազմութեան գլխաւոր մեթոդը Զալլիւրկի կաթ-
ծիբով ննդուկիցիան է։ Դասաւանդումը եթէ ցանկանում է
նոր իմացութիւնների հասցնել աշակերտներին, պէտք է հետեւ
ինդուկցիայի օրինակին, որը բոլոր գլխական իմացակազմու-
թիւնների ժամանակ դորձ է գրւում։ Ննդուկիտւ իմացա-
կազմութեան ընթացքը կատարվում է հետեւել առափանա-
ւորումնեւը։ 1. Կախնկացագրութիւն մի մասնակի գէպքի։
2. Կման և տարբեր կողմի որոշելը զանազան գրւութիւնների
ժամանակի։ 3. Երեսոյթի կապելը պատճառող հանդամանքի
հետ։ Երբուկիտւ մեթոդի այս ընթացքը գործազրութեան է
վերցուում թէ հոգեկան և թէ ընտրիտական – մատիմատի-
կական իմացութիւնների հետազոտումների ժամանակի, որով-
հետեւ այդ բոլոր գէպքերումն էլ գործում են հոգեկան կեանքի
նոյն օրէքնեւը։ Դասաւանդումը, որը պէտք է ննդուկիտւ մե-
թոդի ընթացքին հետեւէ, կատարելու է հետեւել առափան-
նեւը։ Կախնպէտք մասնակի երեսոյթը, ապա երեսոյթը զանազան
գրւութիւնների մէջ և վերջապէս երեսոյթի մեջն ընդհանուրը
և օբինուկանը արտայայտէ։ Այսպիսով գասաւանդման աե-
ստութիւնը գետական հիմունքների վրայ է գրւում։ Այս գա-
սաւանդման տրամադրական – գետական կողմն է։ Պա-
սաւանդումը պէտք է նաև հոգեբանական աեսակեաններ ուշ-
նենայ և այդ կարիքներին բաւարարէ։ Այս երկու աեսակեա-
ներին բաւարարելու և դասաւանդման դորձնն մի ուղեցոյց
տալու համար Զալլիւրկը ստեղծում է եռափանան զասա-
ւանդման «նորմալ ձեւեր» (առափանմններ), որնց մասին գրւում
է։ «Մեր գասաւանդման սիեման (եվեքաստիմունեանը) տար-
բերում է Ցլլերիննեցը նրանով, որ մերը իմացութիւնների
կադակերպման տրամադրական ընթացքին է հետեւում։

թէև Զալլվեւկը եթ դառաւանդման աստիճանների հիմ-
նաւոր ման համար այլ հիմքեր է գործադրում քան Ցիլերը,
սակայն առաջնել զեղականիկական աշխատանքների հետեւանք-
ները էականապէս չեն տարբերուում վեցինից:

O. Urbański.

Յելլէրեան դպրոցի վերաբերմտմը նոյնպէս քննական դիրքունիք բռնածած է այս համեմտառար երիտասարդ հեղինակը։ Նա համարիա մանկավարժական բոլոր էական խնդիրներում չկ հաշտում Յելլէրեանների հետ և նոյն իսկ հակառակ է այն տեսակէտին, որին համաձայն էին մինչեւ աժմ նկարագրած բոլոր մանկավարժները, այն է, որ դասաւանդումը մի որոշ մնայուն առաջ ճանաւորում արէաք է ունենայ։ Այժմ կը նկարագրենք Մեսոմէրի այն կարծիքներից մեջքանեմն, որոնք յատկապէս Յելլէրի տեսակէտների գէմ են ուղղուած։

Ցեղական կազմակերպությունը «փոխաշխատած հոգեբանութիւն է», ուստի դիդակտիկան պարտաւոր է հիմնուել հոգեբանական օրէնքները վրայ: Մեսոմերը այն մանկավարժների կողմն է, որոնք ցանկանում են դիդակտիկան տրամադրանութեան վերաց հիմնել: Հոգեբանութիւնը և դիդակտիկան նրա կարծիքով տարբեր կետութիւններ են: Հոգեբանութիւնը ձգտում է հոգու մէջ գոյութիւն ունեցող նորմալ կամ աննորմալ երևոյթները ուսումնառությունը, առանց արժեքի տեսակետները մտցնելու այդ հետազոտութիւնների ժամանակ: Դա իրաւունք չունի առելու այս երևոյթը սխալ է, այն ի՞նչ երևոյթը ուղիղ, այս հոգեկան բովանդակութիւնը արժեքաւոր է, այն ի՞նչը՝ ոչ: Դիդակտիկան ես գործ ունի հոգեկան իրողութիւնների հետ, սակայն նրա առառակեանները այդ իրողութիւններին մօտենալիս այլ են: Դիդակտիկական աշխատանքի ժոմանակ առաջնորդում ու ընթացք ենք տալիս աշակերտի հոգուն նախօրօք դրած մեր նպատակների համաձայն, մենք ճնշում ենք երկխայի մէջ արթնացող աննորմալ ձգտումները և ցանկութիւնները: մենք մի գիտակեց ճնշում, հարկադրանք ենք ժանրացնում երեխայի ըսլորովին ազատ ու ընակնին թողած զարգացման վերաց: Հետեւեալ փոքրիկ օքինակը պարզ ցո ց կը տայ, թէ ի՞նչ-պէս մինոյն երևոյթի վեցաբեմամք գիդակտիկան և հոգեբանութիւնը տարբեր վերտարբունք են ցոյց առլիս: Հոգեբանութիւնը հետաքրքրում է, թէ ի՞նչպէս են յառաջանում ընական եղանակով մեր մէջ ծագած գաղափարները, դիդակտիկան հարցնում է ընդհանակառակը, ի՞նչ եղանակներով ու միջացներով հնարաւոր է ուղիղ ու արամարդարական դադարանքը զարգացնել աշակերտների մէջ:

Դեղականի համար առաջ է գտնվում ուսուցչության մեջ կատարուող աշխատանքը՝ հետեւանքները գնահատում է համաձայն իր դե-

գակտիկական նորմերի: Տրամաբանութեւնը ևս նորմատիւ է: Աս մարդկային մտածողութեան մէջ ապրող օքնքներով կամ նորմերով մտածման գործունէութեան հետեանքներն է գնահատում: Գիտական ճշմարտութեւնները հիմնուած են տրամաբանութեան մէջ գուծող օքնքների վրայ: Տրամաբանորէն ճեշտը միենոյն ժամանակ զիտական տեսակէտից ճեշտ է: Գիտական զբազումների ժամանակ անհնար է առանց տրամաբանական միջոցների որ և է նիւթ մշակել: Տրամաբանական մեթոդները զիտական արժէք ունեն: Տրամաբանութեան անալիզ, սինթէզ, ապստրակցիտ և այլ մեթոդները զիտութեւնների համար ևս էական և անհրաժեշտ են: Գիդակտիւկայի նպատակն է զիտական իմացութեւններ առաջ մշակումների համար ևս էական գործութեւններ առաջ պէտք է գործածի այն բոլոր մեթոդները, որոնք զիտութեւնների նիւթերի մշակման ժամանակ դեր են խաղում: Խոկ որովհետեւ զիտական մեթոդները հենց տրամաբանական մեթոդներն են, ուստի և զիդակտիկայի համար օչինակելի պէտք է լինին այս վերջինները: «Գիտութեւնների տրամաբանական մեթոդները զիդակտիկական արժէք ունին, որովհետեւ զիդակտիկայի ժամանակ միենոյն նպատակներին ենք ձգտում»: Այսպիսով զիդակտիկան փոխանակ սուրբեկալ հոգեբանականի վրայ հիմնուելու, ինչպէս այդ ցանկանում էը Ցիլերը, հիմնուում է օբեկտիւ գիտական, տրամաբանականի վրայ:

Ցիլերն ու իր գպրոցը այն կարծիքն են, թէ իմացութեւնների կազմուելու համար միմիայն մէկ մեթոդ գոյութեւն ունի, այն է ձեւական աստիճանները: Մեսոմէրը կարծիքով ուսուցիչը բազմաթիւ ընդհանուր արժէք ունեցող սկզբունքներ ունի, որոնք յարմար տեղին և ժամանակին պէտք է գործադրէ: Նախօրօք չե կարելի առել, թէ այդ սկզբունքները ինչպէս են իրարու յաջորդելու, ինչպէս այդ Ցիլերն է ցանկանում: Մեթոդները բազմապիսի են, նիւթերի որակը նոյն պէս բազմակերպ է: ուսուցիչը պէտք է աղատութեւն ունենայ որոշելու, թէ ինչ գէպքում որ մեթոդը ամենից յարմարն է: Ցիլերեանները մի մեթոդ ունին, միշտ էլ, ամեն մի նիւթի վերաբերմամբ նոյն ընթացքն են հետեւելու, որը սակայն ամենամեծ հնարաւորութեւնը ունի զպրոցական աշխատանքը շաբանացնելու: Մեսոմէրը Ցիլերն ձևական աստիճանների մասին մի մասնամասն քննապատական աշխատանք ունի, սակայն այժմ տեղը չե այդ ինսդիբների վրայ շատ երկարել:

ՔԱՆԱԳԲԵՐԿԱՆ ՄՐԱ.

ԳԱՍՏԱՆԴՄԱՆ ՆՊԱՏԱԿԻ ԲՈՏ ՑԻԼԵՐԻ.

«Յթէ մինք ունենայինք գաստիարակութեան մշակուած մնագ, այն ժամանակ ի հարկի, շատ վնասակար կը լինէր նրանից շեղուել, բայց որովհետեւ այդ մնագը գեր որոնում ենք, ուստի եւ միմիանցից անկախ զանազան ուղղութեամբ հետազոտութիւն անողների ջանքերը ցանկալի նպատակին հասնելու ամենալաւ միջոցն են»:

Սպեսէւք.

կրետ գըութիւններից գաղափարների բարձրանալու-իր պահանջովը ոչ մն նորութիւն չմտցը յ մանկալարժական գաղափառնութեան մէջ, այլ եր և իր գաղոցի աշխատանքով այդ միաբը օրոշ չափի աւելի ժողովրդականացը:

Այս ոկզունքը գէմ ընդհանըապէս ոչինչ չունենք առարկելու, որովհետեւ իսկապէս ոկզնական գաղափարները և օրէնքները հիմնւում են կոնկրետ տուեալների վրայ: Ճիշտ որ անհիմ, աննիւթ գաղափարները չեն կարողանում ճիշտաւորուել մեր հոգու մէջ և հաճոյքի դդացումներ ճնեցնել, այլ մնում են բառեմացութիւններ, որոնց տակ մարդ չի կարողանում օրոշ մասնաւոր և համապատասխան վիճակներ պատկերացնել: Բայց երբ աշակերտների հոգին լցում է օրոշ կարգի կոնկրետ նիւթերով, յառաջանում է նրանց մէջ սովորելու հաճոյք և առաջ գնալու ձդտում: Աաւ կայն այս ձեն էլ է միակողմանի: Կոնկրետ նիւթերին պէտք է յաջորդեն այդ նիւթերի մէջ պարունակուած դադարփարները: Մարդու հոգու մէջ իսկապէս մի մեծ մղումն զատումները: Մարդու հոգու մէջ իսկապէս մի մեծ մղումն կայ դէպէ ապոտրակցիաներ անհետ դործունիութեան ձեզ: Կայ դէպէ ապոտրակցիաները այդ աշխատանքը իր ձեռքը չփեցնէ, աշակերտը հարկադրուած պէտք է անկախ փորձեր անէ այդ ուղղութեամբ: Սակայն հասկանալի պիտի լինի, որ աշակերտի այդպիսի անկախ փորձերը շատ յաճախ սխալ եղակացութիւնների են հանդում, ուստի և ուսուցչի պարտականութիւնն է հետեւ իր սանի մտաւոր դարդացմանը՝ գաղափարների կազմակերպելը իր ձեռքը վերցնելով:

Ինչպէս ամեն մի ճշմարտութիւն, նոյնպէս և վերոյեշեալը ժայրահեղութիւնների առեթ կարող է դառնալ. և իսկապէս Յիլլերի և իր գաղոցի մօտ ժայրահեղութիւն է բացատրում այդ ոկզունքը, ինչպէս և զգալի զեղակտիկական սխալներով են կիրառում գաղոցում այդ մի և նոյն ոկզունքը: Անցնենք իրար:

1. Երրորդ աստիճանի նպատակը Յիլլերը այսպէս է որոշ շում: «Այստեղ հին սինթէզների (Երկրորդ աստիճանների) կոնկրետ նիւթերը ընդհանուր և անհրաժեշտ մտուելը այնպէս են բաժանում, որ սոքա դեռ յարաբերութեան մէջ են մնում կոնկրետ նիւթերի հետ»:

Իսկապէս Երրորդ աստիճանում կատարեալ գաղափարներ չեն կազմուում. այստեղ մի քանի գաղափարացին մասեր առանձացուում են, որոնք սակայն դեռ կապակցութեան մէջ են այն «մասնակի մտապատճերների» հետ, որոնց յից զատուած են: Կոնկրետ նիւթերի օրոշ մասերի այսպիսէ

շեշտումներ աեղի ունեցան նաև երկրորդ աստիճանում, ուստի և երրորդ աստիճանի նման գործողութիւնը չի կարող աշակերտներին նոր թուալ: Նիւթերի բովանդակութիւնը նոյն է, մշակման ձևերը նոյնպէս նոյնը, ուրեմն և այդ աստիճանների որոշակի երարից տարբերելը անկարելի է: Երկրորդ և երրորդ աստիճանների նմանութիւնը ընդունում են նաև մի քանի Յիլլերիաններ: Օրինակ Վեդէտը այդ խնդրի մասին հետեւեալն է գըում: «Ապրաբակցիան արագ է կատարուում, եթէ համեմատութիւնները հայեցողութեան ժամանակ արդէն նախապարատութիւններ են . . . Սինթէզի ժամանակ աչքի ընկնող նմանութիւնները շեշտում են . . . Ասոցիացիանները շերտաւորուում են նաև սինթէզի յարմար տեղերը: Երրորդ աստիճանը վերցնում է նորից գործունէութեան այդ ձևը, կատարելագործում է և ամրացնում»: Այս նախապատութիւնները պարզ ցոյց են տալիս, որ իսկապէս Երկրորդ և Երկրորդ աստիճանների նիւթերը և մանաւանդ մշակման ձևերը նոյն են: Երրորդ աստիճանի գործողութեան առանձնայատուկ ձևը, այն է համեմատութիւնը, տեղի է ունենում զգալի չափերով նաև Երկրորդ աստիճանի վրայ: Տարբերութիւնը, եթէ այդ կայ, միմիայն քանակային է՝ մէկ տեղ համեմատութիւնները և նման կողմի շեշտումները աւելի են կատարուում, քան միւս գէպերում: Եւ որովհեաւ տարբերութիւնները զուտ քանակային են, ուստի և այդ աստիճանների միացումը մի ամբողջութեան մէջ, ոչ միայն կարելի, այլ նոյն իսկ անհրաժեշտ է: Հարկաւոր է Երկրորդ աստիճանի մշակումը աւելի մանրամասն անել և ահա կարել չի լինի մի առանձին և ինչնուրոյն աստիճան ունենալու: Նիւթերի մշակման տարբեր եղանակները միմիայն կարող են առիթներ գանաւալ առանձին աստիճանների հիմնաւորման:

Ցոյց տալու համար, որ Վեդէտի վերացիշեալ կարծիքները անհատական գոյն չունին, այլ ամենաականաւոր Ֆելլէրիանները անդամ իրենց օրինակելի դառների մէջ այդ նոյնը երագործել են ջանացել, բերենք մի քանի օրինակներ: Պայնը իր «Գողովրդական գաղոցների թէօրեան և պատկերական» գրքի մէջ «Տիկին Հոլլէ» հէքիաթը այսպէս է մշակում: Երկրորդ աստիճանում նոր նիւթը տալուց յետոյ անմիջապէս հետեւեալ հարցն է արւում: «Զպէտքը Խոզմանք, որ խեղճ աղջեկը ցեխոտած տուն վերագարձաւ»: Դրութիւնների քննութեանից յետոյ աշակերտաները գալիս են այն եղակացութեան, որ չպէտք է աղջկանը խղճաւ, որովհեաւ նա ծոյլ էր: Նիւթի այս մշակմանը յաջողում է Երրորդ աստիճանը, ուը

հետեւալ հարցն է տըւում. «Խոկ գիտէ՞ր ինչու միւս աղջկայ դօւթիւնն աւելի լաւ եղաւ»: Պատառխան, որովհետեւ նա աշխատասէք էր: Միթէ այս երկու աստիճանների նիւթերի և նրանց մշակման մէջ կարելի է այսպիսի տաշերութիւններ զտնել, որը մեղ հիմք տար պնդելու, թէ այս երկու աստիճանները իսկապէս իրենց էութեամբ տարեր են, ուստի և ալէտք է իրարից զատուին: Այդպիսի հիմք պարզապէս չկայ: Մի և նոյն հարցերը, մի և նոյն նիւթը, մի և նոյն պատասխանները: Եթէ երկորդ աստիճանը հայեցովութեան աստիճան է կոչւում, ապա պէտք է նաև երրորդ աստիճանը հայեցողական կոչուի. Եթէ երրորդ աստիճանը ապստըակցիա աստիճան է կոչւում, նոյն իրաւունքով երկրորդ աստիճանը ևս նոյն անունով պիտի կոչուի, որովհետեւ, ինչպէս ասացինք, երկու աստիճանների մշակման ձեզ մի և նոյնն է: Այն բոլորից յետոյ և հարկէ չե կարող մարդ իւ զարմանը թագնել, թէ ինչպէս Բայնի պէս մանկավարժն անդամ շաբընին, ուսուցչի ասածին անպայման հաւատարիմ մնալու համար այնպիսի մի տարօրինակ եղբակացութեան է գալիս, որով մի և նոյն հարցը, մի քանի բառեր փոխած երկորդ և երրորդ աստիճանում գործադրելով՝ կարող է մի անդամ հայեցողական լինել, մի ուրիշ անդամ վերտական: Այսպիսի տարօրինակութիւններ Բայնի մօտ շատ կարելի է գտնել: Եթէ Յելլէքան դպրոցի ամենաականաւոր ներկայացուցիչը այդպէս է կերաւում աստիճանները, ապա պարզ պիտի լինի, թէ ինչ խեղաթիւրումների կը հասնէ մի սովորական և պարզ ուսուցիչ:

Որպէս զի պատկերը աւելի պարզ լինի, կը բերենք մի ուրիշ մանկավարժի օրինակելի գասերից մի փոքրիկ օրինակ: Ֆրէօնիլիսը Յովինաթանի և Դաւթի բարեկամութեան պատմութիւնը աշակերտների համար այսպէս է մշակում: Այս պատմութիւնը երկրորդ աստիճանում մշակելուց յետոյ, երրորդ աստիճանում այս նիւթը համեմատում է նայիմի և Հոռոթի և ուրիշ պատմութիւնների հետ և այդ պատմութիւնների հերոսների ընաւորութիւնների նման կողմէրը զատում: Գործող անձանց ընաւորութիւնների նման կողմէրի զատումը գեռ գաղափարակաղմութիւն չէ նշանակում: Ճիշտ որ այսուեղ մի որոշ չափի ապստըակցիայի պրոցէս է կատարելում, ուակայն ամեն մի ապստըակտիւ ընթացքի հետեւանքը դեռ կազմակերպուած գաղափարը չէ: Մեղ հետաքրքրող գէպուամ հանուել էին միմիայն գաղափարի համար հարկաւոր էլեմենտները, որոնք դեռ անհատական ընաւորութիւն

ունէին և որոնք միայն այն ժամանակ են գաղափար կազմում, երբ մի որոշակի գեֆինսիցի են ենթարկւում: Մեղ հետաքրքրող օրինակում գրութիւնը նոյնն է: Աշակերտների համար պարզուել է, որ գործող երեք անձանց ընաւորութեան մէջ որոշ նման կողմէր կան, սակայն նրանց գեռ յայտնի չէ, որ այդ նման կողմէրը «բարեկամութիւն» գաղափարի յատկանին են կազմում: Այս քանը նրա համար պարզուում է միմիայն չորսորդ աստիճանում:

Եթուորդ աստիճանը չի կարելի գաղափարներ կազմող աստիճան կոչել, այլ աւելի ճիշտ նախապատրաստում է գաղափարի գեֆինսիցի համար հարկաւոր յատկանինը: Մի պարտականութիւնը, որը ինչպէս տեսանք, որոշ նիւթերի ժամանակ հէնց երկրորդ աստիճանի ժամանակ է կատարւում:

2. Յելլէքը և եր գպրոցի կարծիքով գաղափարներին հասնելու համար պէտքէ բազմաթիւ կոնկրետ նիւթերի համեմատութիւններ կատարել և յետոյ գաղափարը եղբակացնել: Մի կոնկրետ օրինակից չի կարելի գաղափարը հանել: Երեխաների հոգու զարգացումն ևս նոյնն է ցոյց տալիս: Երեխաները նոյն աեսակի իրերից մի օրինակ տեսնելով չեն կարող տեսակի գաղափարին հասնել, այլ նախ այդ տեսակից շատ իրեր են տեսնում, որպէսզի գաղափարի ճանաչմանը հասնեն:

Այս ձեռք ընդհանրապէս ճիշտ պէտքէ ընդունել մանաւանդ որոշ տարիքի երեխաների համար, սակայն միենոյն ժամանակ սիսակ համարելով այն միտքը, թէ գպրոցի գաղափարների հասնելու միակ ձեռ այդ է: Մի օրինակի մէջ ևս պարունակւում են այն բոլոր յատկութիւնները, որոնք անհրաժեշտ են գաղափար հանելու համար: Այդ նպատակին հասնելու համար հարկաւոր է նախ պարզ և որոշ նկարագրել և քննել մեղ հետաքրքրող մի օրինակը, գէպքը, իրը, ձեռ և այլն. նկարագրեց յետոյ առանձնացել նիւթի միջի էական կողմերը և անուանել այդ կողմերին գաղափար: Որովհետեւ գաղափարը կազմելու ժամանակ գլխաւոր գերակատարը, այսինքն գործին ընթացք տուողը ուսուցիչն է, ուստի և այս ձեռով գաղափար կազմակերպելը, մանաւանդ բարձր գասարաններում գժուաք չպէտք է ընդունել: Խոկ մի քանի անդամ կրկնուած վարժութիւններից յետոյ այսպիսի աշխատանքը բոլորին գժուաք չպէտք է թուայ աշակերտներին: Հետեւալ օրինակովը կարելի է վերև առաջների միտքը աւելի պարզել: գեցուք պէտք է կազմել ուղղանկեան եռանկեւնու գաղափարը: Նախ արժէ նկարագրել այդ եռանկեան բոլոր յատկութիւնները և այդ յատկութիւններից ընտրել նոքա, որոնք ուղղանկեւնու հիմքը

և էու թիւնն են կազմում: Աշակերտը պէտք է մի այդ օրեւնակի քննութեւնսից յետոյ հասկացած լինի, թէ ինչ է ուղղանեան եռանկիւնին: Այսպիսով գաղափարը արդէն պատշաստ է: Նոյն կերպ կարելի է մի օրինակից նաև բարոյական պաղափարներ և օրէնքներ հանել: Մի բարոյական ըսվանդակութիւն ունեցող պատժութիւն աշակերտներին պատմելուց յետոյ կարելի է հէնց այդ մասնաւոր, կոնկրետ դէպքը աշակերտների օգնութեամբ քննութեան առնել և նրա մէջ պարունակուած գաղափարը առանձնացնել: Այսպիսի վերլուծումներին վորքը ինչ վարժուած աշակերտների համար ամենաթեշեւ դժուարութիւնն անդամ դոյութիւն չպէտք է ունենայ մի մասնաւոր օրինակի միջի դաղափարային մասերը ընդհանուրացնելու: Գլուխական աշխատանքի ժամանակ այլ կերպ չեն վարձր, մանաւանդ մի փոքր բարձր գասարանի աշակերտների համար այդ ձեւն է ամենից յարմարը:

Բազմաթիւ գէպերում միմիայն հէնց այս աշխատանքը բաւական է, սակայն յաճախ սորան կարելի է մի այլ լրացուցիչ աշխատանք ևս կցել, որով յատկապէս ստորին գասացուցիչ աշակերտների հոգեկան կարիքներին բաւարարութիւն կըտրուի: Մի օրինակից գաղափար հանելուց յետոյ կարելի է այդ դաղափարը տւելի հիմնաւորելու համար այլ ուրիշ կոնայք կրետ օրինակներ պատմել, որպէս զի աշակերտը նախ համար ստանագ, տեսնելով որ իր հէնց նոր ու սովորած գաղափարը ուրիշ շատ դէպերի համար գին ունի և բացի այդ կարողանայ իր գաղափարը տւելի լայն հիմքերի վրայ զնել և գաղափարի գործադրութեան մէջ վարդուիլ: Այսպիսով զպրոցական աշխատանքի մէջ որոշ չափի գեղուկտիւ ընթացք կը մտնի, որը զպրոցական աշխատանքը կարող է աւելի հետաքրքիր դարձնել:

Գիտական ուսումնասութիւնների ժամանակ ևս նոյն կերպ են վարւում: Բուսաբանական, քիմիական և կամ այլ հարցեր ուսումնասիրելիս չեն վերցնում նոյն տեսակին պատկանող զանազան առարկաներ, այլ նախ վերլուծում են մի օրինակ և նրա էական մասերի առանձնացման միջոցաւ այդ նոյն առարկայի մասին մի որոշ գաղափար կազմում: Այսպիսի աշխատանքից յետոյ քննում են ուրիշ նման առարկաներ, որպէս զի այդ միջոցաւ ստացած գաղափարը ամշական է և ողջանայ և նրա ճշտութիւնը վաւերացուի: Այսպէս պէտք է վարուել յաճախ նաև զպրոցում:

Այս եղանակով կարելի է մի քանի գրական հետևանքների հանել: Այս մեթոդով նախ ժամանակ է խնայւում, այ-

սինքն այն ժամանակը, որը հարկաւոր էր երբորդ աստեճանի զանազան նիւթերի համեմատութիւնների համար: Աշակերտի հոգու անկախ գործունէութիւնը այս մեթոդի ժամանակ աւելի է գործադրութեան վերցում և կըթւում: Մի օրինակից գաղափար հանելու ժամանակ հոգու աւելի լարումն, ապաբակտիւ մտածման զարգացում և ուշագրութեան իենարոնացումն է պահանջում: Եւ բացի այդ երր, մի օրինակից գաղափար է հանուել և նրա ընդլայնումը աշակերտի ինքնաշխատութեանը թողնուել, գրանով մեծանումն է աշակերտի գաղափական ոգին, ինքնուրօյն աշխատանք կատարել կարողանաւու գիտակցութիւնը: Մի այլ հանգամանք ևս կարեսը նշանակութիւն ունի այս մեթոդը զերագաս համարելու համար: Նատ ցանկալի է զպրոցական աշխատանքի ժամանակ զանազան մեթոդներ գործի վերցնել, միօրինակութիւնը ձանգացնող մի հանգամանք է: Բազմաթիւ օրինակներից գաղափարներ հանելու մեթոդից յետոյ, երբ յաջորդէ մի օրինակից գաղափար հանելու մեթոդը, որքան հաճելի կը լինի աշակերտի համար, որովհետև դրանով վերանում է պարագմունքի մոնուան ոգին: Հոգեկան աշխատանքի առանձնայատկութիւններից մէկն է մի և նոյն նպատակին զանազան ճանապարհներով հասնելու ձեր, և եթէ զպրոցական պարագմունքների ժամանակ այդ օրէնքի կերպարման հնարաւորութիւնը կայ, պէտք է անպայման իրականացնել:

Յ. Ցիլէրի երրորդ աստեճանի գլխաւոր հոգոն է գաղափարայնը հանել կոնկրետ նիւթերից: Գասաւանդման նպատակն նա այնպէս է զարգացնում, որից յետոյ անհրաժեշտ է լինում այն եղանակացութեան գալ, որ գաղափարները և օրէնքները գասաւութեան վերջնական նպատակներն են: Զետական աստիճանների տեսութիւնը հէնց հիմնած է գաղափարներ հանելու և մշակելու սկզբունքի վրայ:

Ընդհանուր առմամբ Ցիլէրի այս ըմբռնումը իրաւացի է. մարդու հոգեկան կեանքի զարգացման նպատակն է վերացականանալ, գաղափարայն տարրերով լցուել: Սակայն սխալ պէտք է համարել այն ըմբռնումը, թէ գաղափարներ և օրէնքներ հանելը գասաւութեան միակ և այն էլ էական նպատակն է: Դաստաւութեան ժամանակ կարող են և պէտք է ըազմաթիւ նպատակներ լինին, որոնցից մէկն էլ կարող է գաղափարակաղմութիւնը լինել:

Բազմաթիւ մեթոդական միութիւնների նպատակը գաղափար տալը չէ, այլ կոնկրետ պարզ նիւթեր մշակելը: Մի նոր երգ սովորեցնելիս անհրաժեշտ չէ անպայման այդ երգի

մէջ պարունակուած գաղափարները և օրէնքները առանձնացնել, սրովիետե նախ ամեն մի նոր երգ յարմար և հետաքրքիր գաղափարներ չունի և տպա նիւթի մշակման ժամաքը լիրող կաղը են ըոլորովին այլ նպատակներ գոյութիւն ունենալ, ուսուց իրականացնելը աւելի օգտակար է, քան այդ նոյն նիւթերից օրէնքներ հանելը: Մի նոր երգ տալիս, օրինակ կարող է ուսուցչի գլխաւոր նպատակը նիւթի էստետիկական հաճոյք պատճառելը լինել, իսկ հաճոյք յառաջացնելու ժամանակ ապատրակիւ մեթոդի գործազրութեան կարծիք չկայ: Նոյնը կարելի է ասել նաև մի ոտանաւորի մշակման համար, այնտեղ զիմանակը չէ տալ օրէնքներ, բարոյական գատարութիւններ. այստեղ աւելի գեղարուեստական զգացումներն են արթնացւում և մշտիւ, լեզուի նկարագրած դրութիւնների գեղեցիութիւնը պարզւում և այս բոլոր աւելի կոնկրետ, զգայական եղանակով, որովհետեւ, նույն պնդում է իրաւամբ յայտնի գեղագիտ ֆոլկելու, գաղափարը, վերացականը սպանում է գեղարուեստական հաշակումը: Եւ եթէ այսպիսի գէպերում բարոյական և գուտ լեզուական օրէնքներ և գաղափարներ հանելը դասաւութեան ըուն նպատակը զարձնենք, ապա իսկական նպատակը, գեղեցկութիւնը ետ կը մղուի և նոյն իսկ զգալիօրէն կը վնասուի, որովհետեւ երկրորդականները ուշագրութեան գըլխաւոր ըովանդակութիւնն են կազմում, այն ինչ գլխաւոր ները գիտակցութեան ափերն են գրաւում: Նոյն դրութիւնը նաև պատմական նիւթերի մշակման ժամանակ: Ստորին դաշտաններում մանաւանդ պատմական նիւթեր տալու ժամանակ այդ գէպերը մէջ գործող օրէնքների գիտակցականացնելը չէ ըուն նպատակը, այլ գէպերի տալը: Պատմական նիւթերից շատ շատերը սովորցւում է ոչ թէ գաղափարներ հանելու, այլ պատմական գէպերի կոնտինուիտէտը, յաջորդականութիւնը լրացնելու համար: Բացի այդ պատմական ըոլոր գէպերը չեն պարունակում հետաքրքիր և նոր գաղափարներ. մի և նոյն հարցերը, խնդիրները կրկնուում են պատմական գէպերի զարգացման ընթացքում, ուսուի և անմատ մի քան կը լինէր ամեն մի շրջանից գաղափարներ հանելու մասին մտածել, որովհետեւ այդ՝ անմիտ կրկնութիւններ անել կը նշանակէն: «Պատերազմ», «Խաղաղութիւն», «Պաւաճանութիւն», «Առաքենութիւն» և ուրիշ գաղափարներ մի անգամ մշակելուց յետոյ, աղագայի նիւթերի ժամանակ կրկնուում են անլիքը: Աղագայի նիւթերը մեծ մասամբ այդ կամ նման գաղափարների այս կամ մողեֆեկտացիան

են. գաղափարը մասամբ ընդլայնւում է դրանով: Այսպիսի գէպերում ուրեմն խօսք չի կարող լինել «կոնկրետ նիւթեր» բաց գաղափարներ հանելու» ընթացքի մասին:

Գաղափարներ կաղելու լաւագոյն ձեռն է նաև հետեւալը. նախ տրուում է զուտ կոնկրետ-դիտողական նիւթեր. այդ նիւթերը մշակուում են և իւրացւում աշակերտից երբեք անհատական գոյն ունեցող բովանդակութիւններ: Նման կոնկրետ նիւթեր ապագայուում ես դասաւանդուում են և ապա յարմարագոյն ժամանակ անցեալի և ներկայի այդ կոնկրետ նիւթերից գաղափարներ հանւում: Այս մեթոդի կողմանակցի կարծիքով ուրեմն մեթոդական միութիւնը կազմուած չէ լինուում այնպիսի նիւթեր, որից կարելի է և պէտք է գաղափար հանուի, այլ ամեն մի կոնկրետ նիւթ, որը գաղափար տալու յարմարութիւններ չունի, բայց ներքին ամբողջութեան տէր է, կարող է մեթոդական միութեան նիւթ դառնալ: Այս ձեռ հետեւեալ առաւելութիւններն ունի. գաղափարը չի կազմուում հէնց առաջին պատահած և անկատար գէպերի ժամանակ: Մեթոդական միութեան մէջ այն քաղմաւթիւնների կարեքը չի զգացւում, ինչպէս Ցիլէրի մօտ: Նոյն նիւթի գաղափար կազմելու համար կրկնութիւննը անմիջապէս չի կատարուում, այլ բաւականին ուշ, որը լաւ եւրացնելու և յիշողութեան մէջ ամրապնդելու համար լաւագոյն ձեռն է, ինչպէս ցոյց է տալիս էքսպերիմենտալ հոգեբանութիւնը: Այս ձեռ համապատասխան է երեխանների հոգեկան կարելներին, որովհետեւ որքան ուշանայ գաղափարներ կազմելը, այնքան լաւ:

Ցիլէրի գպրոցին պատկանողներից շատերը այն համոզամանն են, որ գպրոցում դասաւութեան ժամանակ միահիշող ընթացքը կոնկրետ նիւթերից գաղափարներին անցնելն է: Վեգէտը գըում է. «Հայեցողական նիւթերի համար յաճախ յարմար ասոցիացիաններ չեն դանւում: Այս գէպերում դասաւանդումը նորը եւրացնել տալով առ ժամանակ համուում է իր նպատակին: Մի այլ տեղ նոյն հեղինակը գըում է. «Կան այնպիսի առարկաներ, որոնք աւելի հասուած են դիտողական նիւթերով, քան վերացական. այդ գէպերում կամ ապստակցիայի քիչ առիթ է լինուում, կամ աւելի սիրով մարդ խուսափում է, քան որոնուում»: Մի այլ տեղ գըում է «Երբ արդէն աշխարհագրական հիմնական գաղափարները կազմուած են, ապա ուսուցումը մի երկրից միւս երկրին, մի ջրաբաշխութիւնից միւս ջրաբաշխութեանն է անցնում առանց նոր գաղափարներ զարգացնելու»: Այս կարծիքները

ճեշտ են և ընդհանուր առմամբ համաձայն են մեր վերոյեւ-
շեալ բացարարթիւններին, սակայն պէտք է աւելացնել նաև
այն, որ խոկապէս Վեդէտի այս կարծիքները չեն համապա-
տասխանում Ցելէրի բուն մտքերին. յիշատակելու է նաև
այն, որ այս, ինչպէս և բազմաթիւ այլ խնդիրներում Վե-
դէտը Ցելէրի հաւատարիմ բացարարողը չէ, ինչպէս շատ ան-
գամ ընդունւում է սխալմամբ: Ցելէրը շատ պարզ և որոշ
յայտնել է. «Զեական աստիճանները գործադրւում են գա-
ստանդան բոլոր ներթերի վերաբերմամբ, առանց բովան-
դակութեան խտրութեան»: Ցելէրի գեղակտիկայի բուն էու-
թիւնը դիտողական ներթերից գաղափարներին անցնելն է.
այն մի քանի բացառութիւնները այդ օրէնքից, որոնք կա-
րող են դպրոցական պարապմունքների ժամանակ պատահել,
Ցելէրը թւում է իր գեղակտիկական գլխաւոր գրուածքում.
Նշա իսկական համոզումը մնում է այն, որ միւս բոլոր ներ-
թերը առանց բացառութեան ձեւական աստիճաններով է
թերը առանց մշակել: Մեանդամայն Ցելէրի ոգուն անհամապա-
տասխան է այն կարծիքը, թէ կան այնպիսի առարկաներ,
որոնք ապստրակցիաներից «խուսափում են, քան որոնում»,
«ապստրակցիաների քիչ առելթ են տալիս», որ կարելի է ու-
սուցման ժամանակ ձեւական հինգ աստիճաններից մի քանիսը
գործադրութեան չկերցնել: Այս բոլորը փորձեր են Ցելէրի
մանկավարժութեան չոր և բացարձակութիւն սիրող ոգին
մեղմացնելու, սկզբունքը բուն իրողութիւնների հետ մի փոքր
հաշտեցնելու համար:

Եթէ բոլոր մեթոդական միութիւնները գաղափարներ չեն հանելու, ապա այն միութիւնների ժամանակ, որոնք ազատ են այդ պարտականութիւնից, երսովոր աստիճանը գործադրութեան չպէտք է վեցուկ, որովհետեւ երրորդ աստիճանն է գաղափար զարդացնողը: Ցիլէրի գպօոցը չել վստահանում պարզ տուեալից այս պարզ եղակացութիւնը հանում է: Նա ցանկանում է երրորդ աստիճանը նաև վերոյիշեալ դէպեխում պահպանել՝ ի հարկէ այդ աստիճանի սերբին կազմը մի փոքր փոփոխելով: Ցիլէրի ըմբռնմամբ երրորդ աստիճանը գաղափարներ է հանում: Միմիայն ներթաւաքելը չել կարող նըս պարտականութիւնը կազմել: Վեհական նոյն խնդրի մասին հետեւեալն է յայտնում: «Բազմաթիւ դէպեխում ապստրակցիայի գրոցիսը գառնում է մտապատճենների կապակցութիւն: գաղափարայինի զատումը կամ բոլորովին տեղի չէ ունենում և կամ աւելի ուշ ժամանակում է տեղի ունենում: Նախ պէտք է արստրակցիայի

Համար անհրաժեշտ նիւթերը ժողովել»։ Նոյն կերպ է մտածում նուև Բայլս։ «Եթեորդ աստիճանը ապագայում գաղափարը կազմելու համար նիւթեր է ժողովում»։ Այս կարծէքները անհատական բնաւորութիւն ունին և ներքին կապակցութիւն չունին Ցելէրի կարծէքների հետ, որովհետև Ցելէրը շատ կարուկ կերպով է պահանջում, որ երրորդ աստիճանում արստրակցիայի-վերացականացման գործողութիւն կատարուել։ Նիւթեր հաւաքելը Ցելէրի կարծիքով չի կարող երրորդ առաջնանի նպատակը լինել։ Եւ իսկապէս այդպէս էլ է։ Նիւթերը մշակման մի առանձին, ինքնուրոյն եղանակ, այնպէս որ հետայդ հաւաքելը ինքը չի կարող հիմունք դառնալ նոր աստիճանի կարիքը։ Նիւթերի ժողովածուները տեղի ունեցան նաև Երկրորդ աստիճանում, ապա այդ գէպում էլ պէտք է պահանջէլնք, որ Երկրորդ աստիճանից Երկու ինքնուրոյն աստիճաններ կազմուէին։ Բացի այդ առաջին և Երկրորդ աստիճանների նիւթերը ես կապակցուում են իրարու հետ, այնպէս որ Երրորդ աստիճանի միմիայն նիւթեր հաւաքելու աշխատանքը մի այնպիսի նորութիւն չունի իր մէջ, որ կարելի լինի ասել թէ մի ինքնուրոյն աստիճանի կարիքը կայ։ Ցելէրի գլուոցի անդամներից մի քանիսի այն կարծիքը, թէ դասւանդման նպատակը չէ միմիայն գաղափարներ հանելը, կարելի է ծիշդ ընդունել. ոակայն սխալ է այն ձգտումը, որով ցանկացում են այլ և այլ, և այն էլ բաւականին անյաջող միջոցներով երրորդ անունով մի աստիճան ունենալ։ Այս հիմունքները գոնէ, որոնք ըերւում են Ցելէրեանների կողմից աստիճանի ապստակցիաներ չկատարելու կարիքը հաստատելու համար, համոզեցուցիչ չեն։

4. Վերև քննած հարցի հետ անմիջօրէն կապուած է մի այլ, գիդակտիկայի համար ոչ անկարեռը խնդիր՝ դասաւանդան ժամանակ պէտք է ներթերը բաժանել համապատասխան իրենց ներքին էութեան, թէ՞ ՑԱՀԵՐԻ տեսակէտով, այն է ներթերը համախմբել ըստ դաշտափառներ տալու հնարաւորութեան։ Խսկապէս ըստ ներթի որակի պէտք է դատել, թէ մի ներթեց ինչ կարելի է սպասել։ միմիայն պարզ մշակում, թէ դիտողական հարստացում, դաշտափառների զարգացում, թէ էստետիկական բաւականութիւն և այլն։ Նիւթեր ոտուրաբաժնելու և մշակելու զանազան ձևեր կան, որոնցից վարպետորէն օգտուելն է մանկավարժական մեծ գործքը։

ՑԵԼԵՑՑ մօտ հարցը այլ կերպարանք է ստացելու նա հաւատացում է նիւթերը համախմբելու և մշակելու միմիայն մի

ձեք: Ամբողջ տալուայ նիւթերը պէտք է բաժանել կտորների, սակայն այնպէս, որ ամեն մի կտոր իր մէջ պարունակի մի որ և է գաղափար, օրէնք կամ կանոն. մի խօսքով ամեն մի մեռողական միութեւն վերացական աշխատանքի մարդարան պէտք է լինի: Նիւթ համախմբելու, ստորաբաժանելու ոկզպունքը ուրեմն այն է, թէ այդ նիւթը իր մէջ գաղափարը ունի, թէ ոչ: Նիւթ մշակելն ևս մի ձեռ ունի, որը ձեական հինգ աստիճաններն են: Որոշելուց յետոյ, թէ ուն է մեթուղական միութեւնը, այնուհետև պարզում է, որ այդ միութեան մէջ գործադրուելու են հինգ աստիճաններն էլ անխատիք: Ուրեմն հնարաւորութիւն անկարելի է. աստիճաններից որ և մէկը, կամ մի քանիսը թողնել, նոյնպէս արգելում է: Այս կարծիքը հաստատում է հետեւող փաստերով: Գէօրգի Ֆելդը գրում է. «Ցիլէրի Լայպցիգի սեմինարիայում սեմինարիամբ անդամներից պահանջում էր, որ ամեն մի առարկայից կազմած պրելացացիաները (մշակուած դասերը) ձեական հինգ աստիճաններով մշակուած լինին և դրա համաձայն վարուին վարժոցում դասաւանդելու ժամանակ»: 1886 թուի Լայպցիգի սեմինարի գրքի մէջ Ցիլէրը գրում է. «Նիւթի ստորաբաժանումը ըստ հինգ աստիճանների պէտք է տեղի ունենան, քանի որ սովորելը ապերցեպցիայի գործողութիւն է... քանի որ գաղափարները մտապատկերների աւելի բարձր մշակուած ձեերն են... քանի որ իմացութիւնը ոչ թէ մեծ մշակուած ձեերն են... քանի որ կերպութիւնը ոչ թէ մեծ կտորներով, այլ մանր ստորաբաժանումների միջոցաւ յարմաք է սովորեցնել...»: Նոյն մոքով է արտայայտում նաև Ռայնը. «Աւսուցման ամեն մի կտոր ձեական աստիճանների միջոցաւ պէտք է մշակուէ: Նիւթի մշակման ժամանակ որևէ քմահաճոյք թոյլ չե տրուում»: Եւ երբ ֆօդար, «գիտական մանկավարժութեան» նախկին նախագահը, ինչպէս և շատ ուրեմն Ցիլէրեաններ կարծում են, թէ Ցիլէրի աստիճանները «միմիայն սկզբունքներ» են, որոնք կարող են ըստ կամաց փոփոխութիւնների ենթարկուել, ապա պէտք է սխալ ընդունել այդ կարծիքը՝ իրաւունք տալով Զալւերկին պնդելու, թէ Ցիլէրը և նրա գպրոցը նոյն հիմքերի վրայ չեն կանգնած: Տեսնում ենք, որ նոյն լինգը առթիւ Ցիլէրի դպրոցի մէջ անհամաձայնութիւններ կան: Սակայն Ցիլէրի, հիմնադրել կարծիքը որոշ է. Նիւթերը մշակելու երկու կերպ չե կարող լինել՝ ձեական աստիճանները անպայման պէտք է կերասել և այդ աստիճաններից և ոչ մէկն էլ բաց չթողնել:

Այս տեսակէտը սխալ է: Նիւթերը ըստ իրենց էութեան չեն կարող նոյնը լինել. հէնց զանազան մասնագիտութիւն-

ները առիթ են նիւթերի որակների տարբերութեան. նոյն մասնագիտութեան նիւթերն անդամ իրավոց որոշ հիմքերով տարբերում են: Նիւթի ամբողջութեան պատճառը կարող է մի մասնակի դէմքը, բնութեան մի իր, հոգեկան մի ապրում, պատճական մի անձնաւորութիւն, օրէնքի կամ բարոյական կանոնի մի մարմնացում լինել: Մտապատկերների համախմբման պատճառները, ինչպէս տեսնում ենք, կարող են բաղմապիսի լինել: Ուրեմն դպրոցում նիւթերի համախմբումը կատարելիս ոչ թէ պէտք է մի որոշ շաբանով մօտենանք, ինչպէս Ցիլէրը, այն է թէ այդ նիւթերից գաղափարներ են կազմուում, թէ ոչ, այլ աւելի լայն աեսակէտներով: Նատ նիւթեր առանձին ամբողջութիւններ են նկարում, որովհետև նրանք մի մասնակի գրութիւն, էստետիկական մի վիճակ են պատկերացնում: Նիւթը ինքն է իր ամբողջութեան որոշողը, և ոչ սիայն ամբողջութեան, այլ և մեթոդի ընտրողը: Նիւթերը չեն մշակւում միենոյն կերպ. մի նիւթի համար յարմար է անալիտիկ, մի ուրեմն համար սինթետիկ մեթոդը. մի այլ նիւթի համար ինդուկցիան, մի ուրեմն համար գեղուկցիան և այլն: Մարդու միտքը իրենի ճանաչողութեանը մօտենում է այլ և այլ ձեերով, մեթոդներով: Ուսուցչի ամինամեծ պարտականութիւնն է ճանաչել նիւթերի առանձնայատկութիւնները, նրանց էսութիւնը և առարողութիւնը թէ այդ նիւթերի մշակութիւնը երեխանների համար եղող մի քանի մեթոդներից որով ամենից յարմարն է մշակել: Ուրեմն դիրքակտեկան մեթոդը մէկ չէ, այլ բաղմապիսի:

Ցիլէրը ինդիքը այսպէս չէր ըմբռնում. նա կարծում էր, թէ միայն ձեական աստիճանների գործադրութեամբ կարելի է նիւթերը ճիշտ եղանակով մշակել: Այս պահանջը վնասել կարող է ուսուցման գոյծին, որովհետև նիւթերը տարբեր են, նրանց մշակման մեթոդները տարբեր են, այն ինչ Ցիլէրը այդ բոլորը միօրինակութեան է վերածում: Նախօրօք որոշած է մեթոդի սխեման, միւս նիւթերը այսպէս թէ այնպէս հարկադրութեամբ այսպէս առթիւ անթարկուել այդ ձեեն: Մի նիւթ, որը դպրութիւնը տալու ընական յարմարութիւնը չունի, միակողմանի ու անընական մշակման հենթարկուի Ցիլէրի ուսումները հաւատրիմ շարունակողի կողմից. նա կաշխատէ ամեն կերպ այդ նիւթից մի գաղափար հանել, որովհետև տեսութիւնը այդպէս է պահանջում: Որ իսկապէս այսպիսի անընական գըութիւն յառաջանալ կարող է, որոյց են տալիս Ցիլէրի դպրոցին պարտականողների մշակած օրինակելի գասերը: Որբա՞ն քմահաճոյք և բռնազբօսիկ վարմունքներ: Տեսնում ենք, որ իս-

կապէս նիւթը չէ հիմունքը, այլ մեթոդը, ձեզ՝ տեսնում ենք, թէ ինչպէս բոլոր աստիճանները պահած լինելու համար ծիծաղելի միջոցների է դիմում։ տեսնում ենք, թէ ինչպէս մեթոդի պատճառով նիւթի առանձնայատկութիւնը, ուրոյնութիւն անհնար է գառնում ճիշտ ըմբռնել։ և վերջապէս տեսնում ենք, թէ որքան ճիշտ է նկատել պրօֆ. Բայնը եր նախկին ուսումնասիրութիւնների ժամանակ, թէ երբ բոլոր մեթոդական միութիւնները «Ճեական հինդ աստիճանների միջոցաւ մշակուեն», կըյառաջանան անպայման արհեստականութիւններ...»։ Այդ վիճակից ազատուելու մի ձեւ կայ միայն։ Նիւթը ընդունել հիմունք մեթոդական մշակումների և առհասարակ նիւթին յարմարեցնել մեթոդները։

Յ. Ցիլէրի ոգուն հակառակ է գաղափարները և օրէնքները ուսուցանել առանց նախօք կոնկրետ նիւթեր տալու։ Վերացականորէն տալ վերացականը սխալ է։

Ցիլէրի կարծիքով մարդու հոգու մէջ մի մզումն կայ գէպի նիւթերի բազմազանութիւնը, իսկ նիւթերը իւրացնելու ձեզ մէկ է, այն է լինդուկտիւ իմացակազմութիւնը։ Կախ տալ մասնակի իրողութիւններ և ատա զբանց համալատասխան կոնկրետ գաղափարներ։

Խնդրի այս կերպ գնելը միակողմանի է։ ուսուցման ժամանակ կարող են թէ գեղուկտիւ և թէ ապստակտիւ մշակման ձեռք կիրառուել։ Մարդու նոր սովորած նիւթերը կարող են ինչպէս կոնկրետ, այնպէս և ապստակի լինել։ մարդը կարող է ը հոգեկանը երկու ուղղութեամբ էլ գործի գնել։ Երբ մարդ աշխարհ է գալիս, չունէ ինքնագիտակցութիւն, հոգեկան բովանդակութիւնների մաքուր ըմբռնումն։ աստիճանաբար նրա հոգին ընդունակ է դառնում զրոյ տըպաւրութիւնները գիտակցօրէն իր մէջ ճառագայթելու։ Սկզբում այդ իւրացրածները լինում են կոնկրետ, մասնակի իրողութիւններ։ Աստիճանաբար ելեխան սովորում է երերի մէջ գոյութիւն ունեցող ընդհանուր կողմերը զատել և մի որոշ գաղափարի տակ առնել։ Հոգին կարիք է զգում տընաւեսելու իր ուժերը. անհնար է ըրող մասնակի երերի, երեւոյթների, զրութիւնների համար առանձին առանձին անուններ գտնել և յիշողութեան մէջ պահել։ Մտածման արագութեանը կըխանգալէր նաև այն հանդամանքը, եթէ հարկադրուած լինէինք մի բանի մասն մտածելու համար ու ձոր և կամ այս ու այն մասնակի գէպէրի յիշողութիւնների ծովը ընկնել։ Անհօաժեշտ է, որ մեր հոգին աւնենայ կամ զարգացնէ իր մէջ մի կարողութիւն, որի միջոցաւ

հնարաւոր լինի խնդիրները վերացականորէն քննել, վերացականորէն լուսած խնդիրները ըմբռնել և կապակցութեան մէջ դնել մեր հոգու ունեցած հին իմացութիւնների հետ։ Մարդու հոգեկանի զարգացումը հէնց այդ պատկերն է տալիս։ Երեխան աստիճանաբար զարգանալով՝ աստիճանաբար էլ զարգացնում է խնդիրները ըմբռնելու ապատքակտիւ ձեզ. այսուհետեւ նա էլ կարիք չունի մի վերացական գաղափար կամ օրէնք լսելու գէպքում զանազան մասնաւոր ընաւորութիւն կրող կոնկրետ գէպքեր պատկերացնելու. գաղափարն էլուելը և հասկանալը միանգամբ է կատարելում։ Վերցնենք մի գիրք, կարգանք այնտեղից վերացական բնաւորութիւն կըող որևէ մի կտոր և տեսնենք, թէ ինչ հոգեկան վիճակի մէջ ենք ընկնում մենք։ «Հոգեկան երկութիւնների նկարագրով և պատճառական բացագրութեամբ զբաղւող գիտութիւնը կոչւում է հոգերանութիւն»։

Անկասկած սրանք զուտ վերացական գաղափարներ և մտքեր են։ Այս նախագասութիւնները կարգալիս, ի հարկէ հիմնուած իմ հոգու նախկին փորձերի վրայ, անմիջապէն, առանց այս ու այն կողմ մտածելու, առանց կոնկրետ գէպքեր և պատկերներ հոգուս մէջ արթնացնելու, կարողաց միտքը հասկանալ։ Այդ բոլորը կատարուեց արագ և վերացական կերպով։ ըմբռնման ակտի ժամանակ պատկերացումները պակասում էին. ես հասկանում էի համարեա միայն բառերը։ Այս մտքերը հասկանալու համար պէտք է ի հարկէ նախապատճեութիւն ունենայի, նախ իմ հոգու փորմալ ուժեւը զարգացած պէտք է լինէին, այդ նախադասութիւնները հասկանալու համար անցեալում պէտք է որոշ կոնկրետ մտապատկերներ և նրանց մատ մտքեր իւրացրած լինէի, այլապէս անհնար կրկնէր հասկանալ այդ մտքերը։ Սակայն այդ նախապատճեական մտքերը, մտապատկերները ներկան հասկանալու ակտերի համար առանձին նշանակութիւն չունին, նրանք այդ բոպէին գիտակցութեան ներքեն են և գիտակցութեան կուլիսների ետևից են գործում։ Անդիտակիցը, անցեալի բովանդակութիւնների մինչեւ անդիտակից վիճակի կրծատումները հոգու համար չեն կորցնում իրենց արժէքը, նրանք ետևից դեռ աղջում են մեր գիտակցութեան բեմի վրայ խաղացող բովանդակութիւնների որակի և զարգացման ընթացքի վրայ։ Այս գիտակցութիւնների նպատակը այն էր, ցոյց տալու, որ վերացական նիւթերը կարող են առանց զետակից նախապատճառական անալիցների հասկացուել լուս զի կամ կարգացողի կողմից։

Սովորական, պատահական խօսակցութիւնների ժամանակ ևս մարդկեկ նոյն կերպ են վարւում. մի օքնը, երևոյթ բացատրելու համար չեն նկարագրում նախ այն կոնկրետ դէպքերը, որոնցից հանուած են կամ կարող են հանուել իրենց պատմելիք գաղափարները կամ օրէնքները, այլ անմիջօրէն տալիս են բուն միտքը, օրէնքը և այլն: Օրէնքը տալուց յետոյ երբեմն կարէք է զգացւում լրացնելու նրան մասնաւոր դէպքերի նկարագիւներով: Սովորական խօսակցութիւնը վերացական և կոնկրետ բովանդակութիւնների յաջորդականութիւններն է:

Մէ այլ դէպքում ևս մենք ինդուկցիաին հակառակ ենք դնում: Այս իմացութիւնների համար ենք կամ մասնաւոր դրութիւններից օրէնքներ հանելով, կամ հանած, ստացած օրէնքներից և գաղափարներից նոր եղբակացութիւններ մշակելով: Կը գուռն էլ շատ վազուցուանից գործադրուող միջոցներ են մեր իմացական աշխարհը հարստացնելու համար: Որոշ առարկանների մէջ յատկապէս այս ձեռք գերիշխող նշանակութիւն ունի: Մեր սովորական կեանքում պակաս դեր չէ խազում այդ նոյն ընթացքը: Նախ զբազում ենք մի որոշ վերացական բովանդակութեամբ և այնուհետեւ այդ սկզբունքից իջնում ենք աստիճանաբար աւելի կոնկրետ դէպքերը և իմացութիւնների:

Այժմ անցնենք այն խնդրեն, թէ այն կէտերը, որոնք վերել քննեցինք, այն է-վերացականը վերացականօրէն հասկանալու և վերացականից կոնկրետին իջնելու հարցը ի՞նչ նշանակութիւն ունին գորոցական պարապմունքների համար: Գորոցական աշակերտը վերացականը վերացականօրէն հատկանալու կարողութիւնը ունին Պատասխանը գրական մտքով պէտք է լինի: Եօթ տարեկան երեխան ունի այն բոլոր հոգեկան յատկութիւններն ու կարողութիւնները, որոնք յատուկ են մեծահասակին: Տարբերութիւնը քանակային է և ոչ որակային: Այս հանգամանքից պէտքէ եղբակացնել, որ տրուելիք նիւթերը համուպատասխան լինին աշակերտների ըմբռնման կազողութեանը: Աշակերտաները շատ ապստարկ նիւթեր առանց կոնկրետացման կարող են ըմբռնել և ինքնուրոյն փորձեր անել հասկանալու: Ուրեմն հոգեբանօրէն հարաւոր է այդ բանը: Դրութիւնը աւելի վերացական վերլուծումներին յաջորդում է պատմական որոշ դէպքի կամ դէպքերի պատմելը և քննագատելը, որի ժամանակի և հարկէ ուսուցչի անհատը աւելի է գործում, քան նախկին աշխատանքի ժամանակ: Աշակերտները լարսուած ուշագրութեամբ և քննական հայեցքով հետառում են պատմութեան, որովհետեւ այդտեղ տեսնում են իրենց հետաքրքրութիւնը օրէնքի գործադրութիւնը կամ մերգումը: Նման կերպ կարելի է նաև բարոյական, կըօնական և այլ կանոնների հետ վարուելու առաջ օրէնքը, քննագատել և ապա մասնակի դէպքով կամ դէպքերով խնդիրը աւելի պարզել:

յատկութիւններով: Սա մի ընդհանուր վերացական օրէնք է: Աշակերտները այդ նախադասութիւնը լսելուն պէս անմիջապէս հասկանում են այդ վերացական մտքի էութիւնը: Նրանք գիտեն, որ խնդիրը վերաբերում է պետական-հասարակական կեանքներին, որը այդ հարցը ընդհանուր նշանակութիւն ունեցող հանգամանք է, որ այդտեղ երկու հասարակական ֆակտորների մասին ե խօսւում, որ այդ ֆակտորների ոչ թէ հագեկան, այլ մարմնական յատկանիշների և դրանց վրայ հիմնած բարեկեցութեան մասին է խօսքը և այլն: Այսքանը հասկանալը գաղափարը կամ օրէնքի սխեմայի իւրացումն կը նշանակէ: Այս բոլորը հասկանալու համար և հարկէ անհրաժշտ է, որ աշակերտը գաղափարը ունենայ առհասպակ պետութեան, հասարակական ուժերի, հոգեբանութեան և դրանց շրջանին պատկանող մասնաւոր և կոնկրետ մտապատկերների մասին: Այս բոլորը սակայն վերը յետք է անպայման վերաբարդութիւն: Անդհենք նորից նիւթի մշակման ընթացքին: օրէնքը տալուց յետոյ պէտք է նրան անմիջապէս կցել վիճաբանութիւն, օրէնքի լուսաբանութիւն: աշակերտներից շատերը աշխատում են օրէնքի բացարսութիւնը վերացական դատողութիւններով ընդհանուր գնահատութիւններով կատարել, ուրեշները փորձում են օրէնքի բացարսութիւնը կոնկրետ դէպքերով բացատրել և պարզաբանել: Ուսուցիչը միայն ընթացք է տալիս դատողութիւններին և իր կողմից սուր միջամտումներ չեն կատարում: Խնդրի այս աւելի վերացական վերլուծումներին յաջորդում է պատմական որոշ դէպքի կամ դէպքերի պատմելը և քննագատելը, որի ժամանակի և հարկէ ուսուցչի անհատը աւելի է գործում, քան նախկին աշխատանքի ժամանակ: Աշակերտները լարսուած ուշագրութեամբ և քննական հայեցքով հետառում են պատմութեան, որովհետեւ այդտեղ տեսնում են իրենց հետաքրքրութիւնը օրէնքի գործադրութիւնը կամ մերգումը: Նման կերպ կարելի է նաև բարոյական, կըօնական և այլ կանոնների հետ վարուելու առաջ օրէնքը, քննագատել և ապա մասնակի դէպքով կամ դէպքերով խնդիրը աւելի պարզել:

Դասաւանդչական մի այլ հանդամանք մեր վերին պահանջի ճշտութիւնը և հնարաւորութիւնը աւելի է պարզում: Դասաւանդման ժամանակ բազմաթիւ բառեր, գաղափարներ մշակում են ոչ թէ ըստ ձեւական աստիճանների, այլ տրում են նրանց գեֆինիցիաները: Յաճախ ուսուցչիչը հարկադրուած է այդ գաղափարների սահմանումներով բաւականանալ, որովհե-

հետեւ նախ այնքան ժամանակ չէ լինում, որպէս զի ամեն մի գաղափար մանըամասն քննուի և բացի այդ յաճախ յար- մար առիթը պակասում է: Վերցնենք օրինակ մայրենի լեզուից մի յօդուած: այդ յօդուածը, ենթադրենք, մի որոշ կեկայի, օր. արդարութեան շուրջն է պատում: Այդ կեկայի վերաբերմամբ, նոյնպէս ենթադրենք, թէ կարելի հինգ աստիճանները գործադրել: Սակայն չէ որ այդ յօդուածի մէջ կատող են լինել հինգ, վեց կամ էլ աւելի բառեր, գաղա- փարներ, որոնք այս գէպըում չեն կարող ձեւական հինգ աս- տիճանների միջոցաւ մշակուել: Այդ գէպըում գաղափարնե- րց մէջ կարճ բացատրելը, միւսի պարզ գեֆինիցիան տալը բաւական է խնդիրը սպառուած համարելու համար: Գաղա- փարների այսպիսի բացատրութիւն տալու ձեւը պէտք է գոր- ծի վերցնէ նաև Ցիլէրեան դպրոցը, որովհետեւ այլապէս ան- համար է գասաւանդել: Իսկ այն ձեւով գասաւանդելը արդէն վերացական գին ունի իր մէջ: Գաղափարները կարելի է բա- ցատրել ուրեմն առանց ձեւական աստիճանների, միայն սահ- մանանաւորումներով, թուուցիկ կոնկրետացումներով և այն: Եւ եթէ այս հնարաւորութիւնը կայ, ապա աւելի ցանկալի է վերացականը ոչ ձեւական տատիճանների միջոցաւ մշակելու կերպի վրայ աւելի ուշադիր լինել և այդ մեթոդի մասին աւելի մտածել:

Ինչ վերաբերում է ուսուցման գեդուկտիւ ընթացքին, համարեա այն է առուելու, ինչ վերևի հարցի մասին: Դե- գուկտիւ ընթացք այսպէս թէ այնպէս գործադրուելու է գասաւանդեան ժամանակի ի նկատի ունենալով մանաւանդ- մի քանի առարկաների առանձնայացակութիւնները: Հէնց վերև բերած օրինակը գեգուկտիւ ընթացք ունի:

Այս ձեերը ունին իրենց առաւելութիւնները. նախ բա- ւարարում են հոգու տարրեր կարելներին. ինչպէս ասուած է, նոր իմացութիւնների համար ենք կամ ինդուկտիւ կամ գեդուկտիւ եղանակով: Գասաւանդման ժամանակ միքանի ձեեր ի նկատի պէտք է առնուին, և ոչ թէ մի ձե յատկապէս շեշ- տուի, ինչպէս անում է այդ Ցիլէրը: Երկու ձեերի փոփոխ- մամբ ուսուցումը աւելի հետաքրքիր է դառնում, միօրինակու- թիւնից ազատուում: Եթէ հնացաւ որութիւն կայ աշխատանքը փոխելու, ինչո՞ւ չպէտք է այդ հնարաւորութիւնից օդտուել: Վերացական և գեգուկտիւ ձեեր աշակերտի ընտրողական և վերացական բարձր ձեեր կարողութիւնները մեծացնում են աշա- կերտը վարժուումէ խնդիրները վերացական ձեւով ըմբռնելու մէջ: աշակերտը ճգնում է գաղափարները հասկանալ մի փոքր աւելի

ինքնուրոյն եղանակով և վերացական դատողութիւնները աւելի լարելով: Եւ եթէ այսպիսի աշխատանքներ յաճախ կրկնուին, գաղափարայինը հասկանալու ընդունակութիւնները աւելի կըմեծանան: Աշակերտի ձեռքից միշտ բռնած չպէտք է տա- նել, նրան հնարաւորութիւն պէտք է տալ գժուար խնդիրները ևս մօտենալու: Եթէ ի նկատի ունենանք, թէ ինչպէս կեանքը ինքը վերացականը վերացականորէն ըմբռնելու պահանջն է գնում, թէ ինչպէս կեանքը մէջ օրէնքները, բարոյական կա- նոնները, գաղափարները ձևական հինգ աստիճաններով չեն գարգանում, ապա այն գէպըում մեզ համար կըպար- զուի, որ վերացական և գեգուկտիւ ընթացքները կարեոր են գպրոցի համար: Ի նկատի պէտք է ունենալ նաև այն, որ այս ձեերը իրենց լիակատար ծաղկմանը պէտք է հասնին մանա- ւանդ բարձր գասարաններում:

6. Ցիլէրի աստիճանները բոլոր դասարանների, ինչպէս նաև բոլոր առարկաների համար են, մեծ ու փոքր նոյն կերպ են դասաւանդւում: Ողոր տեղերն էլ ուսուցման նպատակը հայեցողական նիւթերից գաղափարներ հանելն է: Այդ են ցոյց տալիս Ցիլէրեան դպրոցի զանազան դասարանների հա- մար կազմած օրինակելի գասերը:

Այս պահանջը մի վտանգ է պարունակում իր մէջ: Ներ- կայ էքսպերիմենտալ ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ երեխաները աւելի մեծ մղումն ունին գէպի կոնկրետ մտածումը, զուտ վերացական և ընդհանուր գաղափարները հաճոյք չեն պատճառում. Նրանք աւելի տարւում են զգա- յական նիւթերով: Այդ տարիքի երեխաների համար պնդել, թէ նրանց ուսուցանելու գլխաւոր նպատակը գաղափարներ կազմելն է, նշանակում է գէմ գնալ հոգեբանութեան ամե- նատարբական օրէնքներին: Այդ տարիքի երեխաները ուսուց- ման ամենալաւ մեթոդը նրանց զիտողական նիւթերով զբա- զեցնելն է: Տալ զգայական նիւթեր, քննել նրա յատկու- թիւնները, բաղկացուցիչ մասերը, կրկնել տալը, յիշողութեան մէջ ամբաղնդելը գործունէութեան այն ձեերն են, որոնք մանկական հոգու հաճոյքի աղբեւը են: Ուրեմն և այդ գէպերում Ցիլէրի աստիճանների ամենաշատը առաջին եր- կուոր կարելի է գործադրութեան վերցնել, միւս աստիճան- ների գործածութիւնը բաց պէտք է թողնել: Բարձր դասա- րաններում, քանի որ աշակերտաների վերացական ըմբռնում- ները աւելի են զարգացել, միտք ունի ուշադրութիւնը աւե- լի կենտրոնացնել վերացականով զբաղուող աստիճաններով:

Դպրոցական կեանքը զարգացման մի շղթայ է, որը կազ-

մուածէ տարբեր կաշեքների զանազան օդակներից, ուստի և դպրոցական բոլոր տարիներում չի կազող ուսուցման նոյն ձևը ամենայարագ նկատուել: Պէտք է տալ բազմաթիւ նիւթեր, և այդ նիւթերը մշակել զանազան ձևերով: Աշխատանքի այս բազմազանութեանը գրական ընթացք է տալիս ընտրող և ստեղծագործող ուսուցիչը:

Քննադասութիւն չորրորդ ասինանի.

Այս աստիճանի նպատակը Ցիլերը այսպէս է որոշում: «Այստեղ գաղափարները և օրէնքները այն ձևով, ինչ ձևով նորա աշակերտաների մէջ ձևակերպուել են, պէտք է որոշուին և այլ ծանօթ բոլանդակութիւնների հետ կապակցութեան մէջ գըուին, ինչպէս այդ բանը մասնագիտութիւնների սխալումի մէջ գոյութիւն ունի»: Երկու նպատակ ունի ուրեմն այս աստիճանը, նախ որոշել գաղափարայինը. և ապա սխալմատիզացիա անել: Այս նպատակներից ամեն մէկը տուանձին-առանձին քննութեան կըլերցնենք:

1. Առաջին նպատակը մի այսպիսի հանդամտնք չէ, որի վրայ հսանաւոր լինէր մի կնքնուուրոյն աստիճան կազմել, որովհետեւ գաղափարին սանկցիա տալ գեֆինիցիայով և անուն տալով մի այնպիսի անկախ հանդամտնք չէ, որի վրայ հիմնուած հսանաւոր լինի պնդել, թէ մի առանձին մեթոդական աստիճան պէտք է ունենալ: Որպէս զի խնդիրը աւելի պարզ լինի, Ցիլերեանների խնդրի ձևակերպման տարօրինակութիւնը բացայացուի, բերենք օրինակներ: Վեդէտը իր «Դասաւանդաման ձևական աստիճանները, գրուածքի վերջը տալիս է մի քանի մշակուած օրինակելի գասուր, որպէս զի ընթերցողը պարզ գաղափար կազմի, թէ որոշ նիւթեր ինչպէս կարելի է ըստ ձևական հինգ աստիճանների մշակել: Օրինակելի դասերից մէկն է որոճացող կենդանիները, որի ամբողջական թարգմանութիւնը տպուած է այս գրքի տասներեքորդ երեսում: Այդ նիւթը հետևեալ կերպ է մշակուում:

III Ասինանի.

Նման կողմերի նկարագիր.

ա) Մեծութիւն. զանազան: բ) Դոյն. նոյնպէս. դ:) Գլուխ մեծամասնութիւնը ունի եղջեւը: Ատամնաշար $\frac{1}{8} \cdot \frac{12}{12}$ բացի ուղարից: դ) Բուն. զանազան ձևի: ե) Ոտները. բոլոր կճղականոր և երկու կեղծ կճղակներ:

IV Ասինանի.

Սկսուեմի տետրում Որոճացողներ.

1. Մեր երկրում գտնուողները. եզր, ոչխարը, այծը, այծեամը. եղջերուն, քարայժը. 2. Օտար երկների որոճացողները. ուղար, արագալազ եղջերուն: Յատկանիշներ. բոլորն էլ օդակար են: Բոլորն էլ սնունդ են առնում խոտերից և կերը որոճում են երկու անդամ: Մեծամասնութիւնը երկու եղջեւը ունի: Ատամնաշար $\frac{1}{8} \cdot \frac{12}{12}$ կճղակներ, որոնք ման գալու համար պէտք չեն գալիս:

Ի՞նչ է երեսում: Չորրորդ աստիճանում չկայ նիւթը մշակելու համար գործադրած և ոչ մի նոր ձեւ: Այնտեղ կըկնուում է համարեա բառացի այն, ինչ ասուել էր երրորդ աստիճանում: Նոյն դատողութիւնները, նոյն խնդիրները. իսկ չորրորդ աստիճանի մի քանի նոր նախադասութիւնները, այն բնաւորութիւնն ունեն, որ կարգացողը ապշում է միմիայն, թէ ինչու այդ նախադասութիւնները պահուել է չորրորդ աստիճանի համար, եթե գրանք աւելի իրաւունք ունին երսորդ աստիճանում լինելու: Խսկապէս միակ նոր քանի, որ չորրորդ աստիճանում կատարւում է, անուն ատան է. աշակերտաներին ասուում է, որ այն կենդանիները, որոնք երրորդ աստիճանում նկարագրուած յատկանիշներն ունին, կոչւում են «որոճացողներ»: Անցեալներում յեշել էնք, որ երրորդ աստիճանում լիակատար գաղափարներ չեն կազմուում, այնտեղ միայն գաղափարների էլեմենտներն են զատւում: Աշխատանքի այդ պակասաւոր կողմը լրանումէ չորրորդ աստիճանում: այստեղ գաղափարի անունն է տրւում, նրա սահմանները և բովանդակութիւնն է որոշուում: Միենոյն բանը կարելի է ուրիշ Ցիլերեանների մօտ ևս գտնել: Ֆրէօնլինը մեզ ծանօթ Դաւթի և Յովնաթանի ընկերութեան պատմութիւնից «Ընկերութիւն» գաղափարը այսպէս է զարգացնում: Երրորդ աստիճանում այդ նիւթը համեմատւում է ուրիշ նման նիւթերի հետ և նման ընդհանուր կողմերը առանձնացնում: Չորրորդ աստիճանում այդ էլեմենտները նկատւում են իբրև «Ընկերութիւն» գաղափարի մասեր և գաղափարը այսպէս է ձևակերպւում: «Երկու անձնաւորութիւնների սրտանց իսար ձգտելը կոչւումէ «Ընկերութիւն»: Այսպիսի բազմաթիւ օրինակներ կարելի է բերել ապացուցելու համար, որ չորրորդ աստիճանում միմիայն գաղափարի ֆեքսացիան և անուն տալին է տեղի ունենում:

Զի կարելի մերժել ի հարկէ, որ գաղափարի դեֆինիցիան,

անուն տալր պէտք է լինի, որովհետեւ անմիտ արարք կըլինէր ներթերի ընդհանութը մասերը գատել, առանձնացնել և այդ զատած մասերին մի ընդհանութը անուն չտալ: Սովորական եղանակով մի գաղափար ստանալու համար անհրաժեշտ է նախ քննել մասնաւոր դէպքերը, այդ մասնաւոր դէպքերը ընդհանութը մասերը առանձնացնել և ապա այդ առանձնացած ներին մի գաղափարի տակ դնել: Սխալ պէտք է ընդունել մի միայն այն, որ զատելը և անուն տալը տարբեր երողութեւններ են ընդունելում և նրանց վրայ առանձին աստիճաններ են հիմնւում, որովհետեւ այդ երկուոր մի ևնոյն գործողութեան երկու երեսն են: Գաղափարների մշակումը առանց այդ երկու կողմերի անհար է պատկերացնել: Ընդհանութը կողմերը զատել առանց անուն և գեֆինիցիան տալու, կընշանակէլ մի անմիտ բան անել, լինչպէս և անուններ և գեֆինիցիաներ տալ առանց որոշ նախամշակումների կըլինէր անկատար: Մէկը լրացնում է միւսին, մէկը անհասկանալի է առանց միւսի: Աւեմն ինչպէս կարելի է մի ևնոյն ամբողջութեան մասերը այդպէս բացարձակօրէն բաժանել երկու մասի: Գաղափարներ կազմելու գործը մի ամբողջութեւն է, ուստի և նա մի առտիճան կարող է զեղալեցնել և ոչ երկու: Եթէ Ցիլէրը հնարաւոր է համարում կապակցածը բաժանել մի քանի մասերի, որպէսզի երկու աստիճաններ կազմէ, ապա նոյն ձեռվ վարուելով կարելի է առաջին և երկրորդ, ինչպէս և միւս աստիճաններից մի քանի աստիճաններ կազմել: Օք. կարելի է երկրորդ աստիճանից երկու աստիճան կազմել, մէկ առտիճան, որը նորն է տալի և միւս աստիճան, որը այդ նոր ներթը մանրամասն մշակում է: Այս զատութը կըլինէր անբնական, արհեստական, սակայն հնարաւոր է այդպէս վարուել, եթէ ոչ թէ հիմնական պատճառները վերցնէնք աստիճաններ կազմելու հիմքը, այլ պատճական որամադրութեւնները: Երրորդ և չորրորդ աստիճանները անբնականորէն զատուած են իրավեց: Նրանք երար են պատկանում, ուստի այդ աստիճանները հարկաւոր է միացնել մի ամբողջութեան մէջ:

Այս պահանջը ինքնըստինքեան հասկանալի և իրաւացի է. նոյն իսկ Ցիլէրի գպըոցը այդ ինքըի մասին գիտողութեւններ ունի արած ինպաստ մեր վերին կարծիքների: Վեգէտը հետեւալն է նկատում. «Հայեցողութեւնների համեմատութեւնները ընդհանութը նման յատկանիշները գտնելու համար և այս վերջներիս համախմբելը (չորրորդ աստիճանը) սովորաւար երար մէջ են անցնում»: Այս շատ ճիշտ նկատողութեանը սակայն անմիջապէս կցում է. «Սակայն տարբերւում են ըստ

